

ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ՀԱՐՑԵՐԻ  
ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ**

Ստեփանակերտ - 2016

### **Հարգելի ընթերցող**

Գրքույկը նախատեսված է հարկ վճարողների և նրանց հաշվապահների համար: Այն բովանդակում է վերջին տարիներին հարկ վճարողների կողմից բարձրացված շուրջ 150 հարց ու պատասխան, որոնք առաջացել են նրանց գործունեության ընթացքում:

Հարց ու պատասխանի տեսքով պարզաբանումների այս տարբերակը ավելի պարզորոշ կերպով է ներկայացնում հարկային ոլորտում առավել հաճախակի հանդիպող, պարզաբանման ենթակա ու հրատապ հարցերի շրջանակները և հնարավորություն տալիս իրազեկել ավելի մեծ թվով հարկ վճարողների՝ զերծ պահելով նրանց օրենսդրական դրույթների տարրնթերցումներից և սխալ կիրառումից:

Հուսով ենք՝ այն կօժանդակի հարկային և հարակից օրենսդրության կիրառման մատչելիության, հարկ վճարողների՝ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության ապահովմանը և կնպաստի հարկերի կամավոր վճարման (ինքնագնահատման) համակարգի զարգացմանը:

***ԼՂՀ ֆինանսների նախարարություն***

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| Հարկեր.....  | 4  |
| Շահութահարկ.....   | 10 |
| Եկամտային հարկ.....  | 18 |
| «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված՝<br>հիփոթեքային վարկերի մատչելիության բարձրացման<br>նպատակով տրամադրվող աջակցություն..... | 27 |
| Ակցիզային հարկ.....  | 36 |
| Ավելացված արժեքի հարկ.....   | 40 |
| Առևտրի հարկ.....   | 52 |
| Հաստատագրված վճարներ.....  | 56 |
| Արտոնագրային վճարներ.....  | 60 |
| Ստուգումներ.....   | 63 |
| Դրամարկղային գործառնություններ.....  | 68 |
| Հսկիչ-դրամարկղային մեքենաներ.....  | 73 |
| Պետական տուրք.....   | 76 |
| Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության,<br>նորոգման և պահպանման համար կատարվող<br>հատկացումներ (մասհանումներ).....                     | 79 |
| Ապրանքների դրոշմավորում.....   | 82 |
| Ժամանակավոր անաշխատունակության<br>և մայրության նպաստներ.....   | 84 |

## ՀԱՐԿԵՐ

### Հարց

***Ե՞րբ է հաշվեդրո ժամանակաշրջանը վերաբերում իրավանախորդ իրավաբանական անջին:***

### Պատասխան

Հաշվետու ժամանակաշրջանը (ժամանակահատվածը) վերաբերում է իրավանախորդ իրավաբանական անձին, եթե տվյալ հաշվետու ժամանակաշրջանի (ժամանակահատվածի) համար հաշվարկների (այդ թվում՝ ճշտված) ներկայացման պահին այդ ժամանակաշրջանը (ժամանակահատվածը) ավարտվել է՝ անկախ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի (ժամանակահատվածի) համար հաշվարկների (այդ թվում՝ ճշտված) ներկայացման վերջնաժամկետներից:

### Հարց

***Ո՞ր անհատ ձեռնարկատերերը կարող են հաշվարկ-հաշվեդրոթյունները ներկայացնել կիսամյակային պարբերականությամբ:***

### Պատասխան

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 20<sup>1</sup>-ին հոդվածի համաձայն՝ տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ աշխատանքային պայմանագրերով աշխատող չունեցող, լիցենզավորման ենթակա գործունեություն չիրականացնող և լիցենզիա չունեցող այն անհատ ձեռնարկատերերը, որոնց նախորդ տարվա ընթացքում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը չի գերազանցել 36 միլիոն դրամը, կարող են հաշվարկ-հաշվետվությունները ներկայացնել կիսամյակային պարբերականությամբ, եթե յուրաքանչյուր տարվա մինչև հունվարի 20-ը ներառյալ իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել հայտարարագիր՝ հաշվարկ-հաշվետվությունները և այլ տեղեկությունները կիսամյակային ներկայացնելու վերաբերյալ:

### Հարց

***Եթե կիսամյակային հաշվարկ-հաշվեդրոթյուններ ներկայացնող անհատ ձեռնարկատերը կիսամյակի որևէ ամսում վարչու աշ-***

**խաբող է իր մոտ չեակերպում, շարունակո՞ւմ է, արդյոք, մնալ կիսամյակային հաշվարկ-հաշվեկտրություններ ներկայացնող:**

**Պատասխան**

Հայտարարագրվող ժամանակահատվածում վարձու աշխատող ունենալու դեպքում անհատ ձեռնարկատերերը փաստը տեղի ունենալու կիսամյակին հաջորդող ամսվա 1-ից մինչև տվյալ տարվա վերջը հաշվարկ-հաշվեկտրությունները և այլ տեղեկությունները ներկայացնում են այդ հարկատեսակների մասին օրենքներով սահմանված ընդհանուր կարգով, բացառությամբ «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված՝ վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի և եկամտային հարկի հաշվարկի, որոնք ներկայացվում են փաստը տեղի ունենալու ամսվանից սկսած՝ այդ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

**Հարց**

**Ստուգման կասեցման ժամանակահատվածի ընթացքում հնարավո՞ր է ներկայացնել ճշգրիտ հաշվարկ:**

**Պատասխան**

Համաձայն «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածի՝ հարկային մարմինների կողմից հարկ վճարողների (հարկային գործակալների) մոտ իրականացվող ստուգումների կամ դրանց կասեցման ընթացքում կամ ստուգումների ավարտից հետո ստուգվող (ստուգված) ժամանակաշրջանին վերաբերող հարկային հաշվարկներ (այդ թվում՝ ճշտված) չեն կարող ներկայացվել:

**Հարց**

**Էլեկտրոնային եղանակով հաշվարկ-հաշվեկտրություններ ներկայացնելիս ե՞րբ է հաշվեկտրությունը համարվում հանձնված հարկային մարմին:**

**Պատասխան**

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի հավելված N 2-ի 9-րդ կետի համաձայն՝ հաշվեկտրությունները պատշաճ լրացնելու և ուղարկելու

դեպքում համակարգը հարկ վճարողին ներկայացնում է հաշվետվության ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան ծանուցում: Ծանուցումը հավաստում է այն փաստը, որ հաշվետվությունը տվյալ օրը և ժամին, հարկային մարմնի տեղեկատվական համակարգում գործող համապատասխան համակարգչային ծրագրով ձևավորված գրանցման համարով ներկայացվել ու գրանցվել է հարկային մարմնի տվյալների բազայում: Վերջինս կհանդիսանա հարկային մարմնի հաշվետվություն ներկայացնելու օր:

**Հարց**

***Առաքված ապրանքի հետ վերադարձի դեպքում կատարվում են, արդյոք, ուղղումներ առաքման գրքում:***

**Պատասխան**

Առաքված ապրանքները հետ վերադարձնելու դեպքում առաքումների գրանցման գրքում ուղղումներ չեն կատարվում: Այդ ապրանքների հետ վերադարձը ձևակերպվում և գրանցվում է հաշվապահական հաշվառման գործող կարգին համապատասխան:

**Հարց**

***Հասույթի գրանցման գրքի լրացման ինչպիսի՞ առանձնահատկություններ են սահմանված հանրային սննդի ոլորտի համար:***

**Պատասխան**

Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները գրանցման գրքում գրանցումները կատարում են ըստ ձեռք բերված հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների (այսուհետև՝ հումք), այլ ապրանքների, որոնք համապատասխան մշակման արդյունքում ստանում են խոհարարական արտադրանքի տեսք: Հանրային սննդի ոլորտում իրականացվող այն գործունեության մասով, որի արդյունքում ձեռք բերված (ընդունված, մուտքագրված, ստացված) հումքը, ապրանքները չեն ենթարկվում մշակման (չեն ստանում սեփական արտադրության արտադրանքի տեսք և վաճառվում են նախնական տեսքով), գրանցումները կատարվում են ընդհանուր սահմանված կարգով: Մշակման ենթարկվող արտադրանքի, ապրանքների մասով գրքի միավորի վաճառքի գնին և գնային փոփոխություններին վերաբերող սյունակներում, մասնավորապես 8-14-րդ սյունակներում

րում, գրանցումներ չեն կատարվում:

**Հարց**

***Ո՞ր դեպքերում ձեռնարկափրական գործունեության առարկաների առաքումը կամ տեղափոխումը չի գրանցվում առաքումների գրանցման գրքում:***

**Պատասխան**

Առաքումների գրանցման գրքում չի գրանցվում պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը, խողովակաշարերով, էլեկտրահաղորդման, էլեկտրակապի գծերով արտադրանքի առաքումը, տարածման նպատակով մամուլի տեղափոխումը, վերանորոգման և համանման այլ ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման ժամանակ պահեստամասերի կամ երաշխիքային ժամկետ ունեցող տեխնիկայի տեղափոխումը, տնտեսավարող սուբյեկտների հիմնական միջոցների, արագամաշ առարկաների, բլանկների ու ձևաթղթերի տեղափոխումը:

**Հարց**

***Ի՞նչ կարգով է կատարվում ապրանքների առաքումը:***

**Պատասխան**

Ապրանքների առաքումն իրականացվում է սահմանված կարգով լրացվող սկզբնական հաշվարկային փաստաթղթերի (ապրանքատրանսպորտային բեռնագիր, պահեստի ելքի անդորրագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն) հիման վրա: Ապրանքների առաքման դեպքում առաքումների գրանցման գրքում ապրանքի բացթողման համար պատասխանատու համապատասխան անձի կողմից գրանցումներ կատարվում են նախապես՝ մինչև տնտեսավարող սուբյեկտի տարածքից ապրանքի դուրսբերումը (տեղափոխման սկիզբը), յուրաքաչյուր հաշիվ-ապրանքագրի համար առանձին-առանձին՝ ըստ առաքման կամ տեղափոխման համար հաշիվ-ապրանքագրերի լրացման հաջորդականության, գրանցման հերթական համարներով: Առաքումների գրանցման գրքում առաքումն իրականացնող տնտեսավարող սուբյեկտի կողմից հերթական համարով գրանցվում է առաքվող ապրանքատեսակի խոշորացված խմբի անվանումը (օրինակ.

սննդամթերք, շինանյութ և այլն), հաշիվ-ապրանքագրի տվյալները, տվյալ տարածքից տեղափոխման ձևը (տրանսպորտային միջոցի տեսակը, մակնիշը, պետհամարանիշը (համարը) կամ նշում առձեռն (առանց տրանսպորտային միջոցի) տեղափոխման մասին և ապրանքի հասցեագրման (տեղափոխման) վայրը: Առաքումների գրանցման գրքում գրանցում կատարելուց հետո գնորդին (ստացողին) տրվող հաշիվ-ապրանքագրի վերևի աջ անկյունում կատարվում է «Առաքողի գրանցման գրքի N \_\_\_\_\_» գրառումը և գրառման մեջ համարի համար նախատեսված մասում լրացվում է առաքողի առաքումների գրանցման գրքի էջի՝ տվյալ հաշվարկային փաստաթղթի գրանցման տողի հերթական համարը:

#### **Հարց**

***Գնային փոփոխությունների դեպքում ինչպե՞ս են կատարվում գրանցումները հասույթի գրանցման գրքում:***

#### **Պատասխան**

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքների գների փոփոխման դեպքում լրացվում են գրանցման գրքի վաճառքի գների գրանցման մասի առաջին փոփոխության համապատասխան սյունակները: Նույն ապրանքների գների երկրորդ փոփոխության դեպքում լրացվում են գրանցման գրքի երկրորդ փոփոխության սյունակները: Ապրանքների գների երրորդ փոփոխության դեպքում գրանցման գրքում (ապրանքների (և դրանց գների) գրանցման մասի «Հերթական համարը», «Ապրանքի ստացման ամսաթիվը» և «Ապրանքի անվանումը», «Չափի միավորը», «Քանակը», «Միավորի վաճառքի գինը (դրամով)» սյունակներում) լրացվում է նոր տող հերթական համարով, միաժամանակ փակագծում նշվում է այդ ապրանքի առաջին (նախորդ) գրանցման տողի հերթական համարը:

Ընդ որում, այս դեպքում գրանցումները կատարվում են հետևյալ կերպ.

- «Ապրանքի ստացման ամսաթիվը» սյունակում նշվում է նոր գնով վաճառքը սկսելու ամսաթիվը,
- «Քանակը» սյունակում՝ ապրանքների մնացորդի քանակը, որը ենթակա է վաճառքի նոր գնով,
- «Միավորի վաճառքի գինը (դրամով)» սյունակում՝ նոր գինը:

Գրանցման գրքում գրանցված գներից տարբերվող վաճառքի այլ գների գրանցումը պարտադիր չէ, եթե համապատասխան կարգով հաշվառվող փաստաթղթերով (հաշիվ-ապրանքագիր, գնման ակտ և այլն) հիմնավորվում է ապրանքների այլ գներով իրացումը:

**Հարց**

***Ո՞վքեր կարող են էլեկտրոնային եղանակով վարել առաքումների գրանցման գրքեր:***

**Պատասխան**

Էլեկտրոնային գրանցում (հաշվառում) կարող են իրականացնել (էլեկտրոնային գիրք կարող են վարել) առաքվող կամ տեղափոխվող ապրանքների, արտադրանքի գրանցման (հաշվառման) գրքեր վարելու պարտավորություն ունեցող այն հարկ վճարողները, որոնք հաշվառումը վարում են ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.04.2015թ. N 43-Ն հրամանով սահմանված չափանիշներին բավարարող համակարգչային ծրագրերով և հարկային մարմնում հաշվառել են էլեկտրոնային գիրք (գրքեր):

**Հարց**

***Հարկ վճարողը առաքումների կազմակերպման սուբյեկտի հասցեի գործունեությունը դադարեցնելու դեպքում ինչպե՞ս պետք է տեղեկացնի հարկային մարմնին, եթե գրանցման գիրքը վարվում էր էլեկտրոնային եղանակով:***

**Պատասխան**

Էլեկտրոնային գիրքը հաշվառումից հանելու համար հարկ վճարողը հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում դադարեցման հայտ՝ լրացնելով հարկ վճարողի և համապատասխան առաքման վայրի կամ առաքման կետի տվյալները, դադարեցման ամսաթիվը:

## ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

### Հարց

*Հարկվող շահույթը որոշելիս ընկերության վարչու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները նվազեցվո՞ւ են, արդյոք, համախառն եկամտից:*

### Պատասխան

Հարկվող շահույթը որոշելիս ընկերության վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով նվազեցվում են համախառն եկամտից:

### Հարց

*Վարչակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում վարչակալի կողմից վարչակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ծախսերի չամորտիզացված մնացորդը ինչպե՞ս է հաշվի առնվում շահութահարկի հաշվարկման առումով:*

### Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում չամորտիզացված մնացորդը չի նվազեցվում վարձակալի համախառն եկամտից, ինչը հանգեցնում է հարկային և հաշվապահական հաշվառման տարբերության առաջացմանը:

### Հարց

*ՊՈԱԿ-ներին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հարկացված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը ինչպե՞ս են հաշվի առնվում:*

### Պատասխան

Հիմնադրի կողմից անժամկետ և անհատույց օգտագործման իրա-

վունքով ՊՈԱԿ-ին ամրակցված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների մասով համախառն եկամտից նվազեցումներ չեն կատարվում, իսկ դրանց վրա կատարված ծախսերը (ընթացիկ, կապիտալ) հաշվի են առնվում վարձակալի համար վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) համար սահմանված կարգով:

**Հարց**

**«Ա» կազմակերպությունը վարչակալել է փոքր տարածք առանց դառնալու ԿՎԽՄ Կարածքի կենսագործունեությունն ապահովող կոմունալ ծախսերի ենթաբաժանորդ, քանի որ դրա կապարման համար պահանջվում են լրացուցիչ ծախսեր: Նման պայմաններում վարչապուն կարո՞ղ է վարչակալից ստանալ կապարած կոմունալ ծախսերի փոխհատուցում:**

**Պատասխան**

Նշված պարագայում կոմունալ վճարները պայմանագրով պետք է ներառվեն վարձակալական վճարի մեջ (որպես վարձավճարի փոփոխուն մաս), որից հարկերը հաշվարկվելու են հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

**Հարց**

**Ապրանքների անհատույց մատակարարման դեպքում հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները դիտվո՞ւմ են, արդյոք, որպես ծախս՝ հարկվող շահույթը որոշելիս:**

**Պատասխան**

Հարկվող շահույթը որոշելիս ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները համախառն եկամտից չեն նվազեցվում:

**Հարց**

**Հաշվետու տարում հիմնական միջոցի վրա կատարվել են ընթացիկ ծախսեր, որոնք գերազանցում են դրա սկզբնական արժեքի 10 տոկոսը: Շահութահարկը հաշվարկելիս ի՞նչ կարգով են դրանք նվազեցվում համախառն եկամտից:**

**Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի և ԼՂՀ կառավարության 15.08.2000թ. N 165 որոշման համաձայն՝ հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը տարբերակվում են ըստ հայտանիշների և (կամ) չափերի: Ըստ հայտանիշների տարբերակման անհնարինության դեպքում տարբերակումն կատարվում է ըստ չափերի: Բնույթով ընթացիկ ծախսերը հիմնական միջոցի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերազնահատման դեպքում վերազնահատված արժեքի) 10 տոկոսը գերազանցելու դեպքում՝ 10 տոկոսի չափով տվյալ հաշվետու տարում դիտվում է որպես ընթացիկ ծախս, իսկ 10 տոկոսը գերազանցող մասը՝ միացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին և ամորտիզացվում օրենքով սահմանված ժամկետներում:

**Հարց**

**Ի՞նչ սկզբունքով է անհրաժեշտ առաջնորդվել կազմակերպության շահութահարկը հաշվարկելիս, եթե հիմնադրի կողմից վարչակալված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքները, ինչպես նաև վարչավճարների մասով պարտավորությունները փոխանցվում են առևտրային կազմակերպությանը:**

**Պատասխան**

«Վարձակալության պայմանագրով նախատեսված վարձակալի իրավունքների և պարտավորությունների փոխանցման» պայմանագրով առևտրային կազմակերպությանը փոխանցվող պարտավորությունների գծով վերջինիս շահութահարկի հաշվարկման համար անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ սկզբունքներով.

ա) «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվա-

ռումն իրականացվում է հաշվեգրման եղանակով՝ համապատասխանաբար ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից: Այսինքն, կազմակերպության կողմից մինչև վերը նշված պայմանագրի ուժի մեջ մտնելը առկա պարտքի մարման դեպքում այն չի կարող նվազեցվել այդ կազմակերպության համախառն եկամտից.

բ) «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի համաձայն՝ ծախսերի թվին են դասվում վարձակալված հիմնական միջոցների դիմաց վարձակալական վճարները և վարձակալության հետ կապված այլ ծախսումները: Նշված դրույթը կիրառելի է նաև ենթավարձակալության պայմանագրի շրջանակներում կատարված ծախսերի նկատմամբ:

#### **Հարց**

***Ընկերությունը հարկային մարմնին հայտարարագրած հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն ընդրել է հիմնական միջոցների ամորտիզացիոն ավելի երկար ժամկետ, քան նախատեսված է «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածով: Տվյալ պարագայում ընկերությունը կարո՞ղ է, արդյոք, փոփոխել քաղաքականությունը և հիմնական միջոցների ամորտիզացիան իրականացնել «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված նվազագույն ժամկետներում՝ ներկայացնելով շահութահարկի հաշվարկի ճշգրտումներ:***

#### **Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները: Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեցողությամբ կա-

րող է ընտրել հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ ժամկետ, սակայն տվյալ խմբի համար այդ հողվածով սահմանված ժամկետներից ոչ պակաս: ՀՀՄՍ 16-ի համաձայն՝ ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը պետք է վերանայվեն առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, և եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից, փոփոխությունները պետք է հաշվառվեն որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի: Այլ կերպ, նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված ամորտիզացիոն նվազագույն ժամետներից ավելի երկար ժամկետ ընտրված լինելու դեպքում, կարող է սահմանվել ամորտիզացիոն նոր ժամկետ («Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված նվազագույն ժամկետից ոչ պակաս) միայն առաջիկա հաշվետու ժամանակաշրջան(ներ)ի համար:

#### **Հարց**

***Շահութահարկի հաշվարկման առումով ինչպիսի՞ն է «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետում նշված «բացասական տարբերության» համախառն եկամտից նվազեցման կարգը:***

#### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան առաջացող ավելացված արժեքի հարկի բացասական տարբերությունը հաշվանցման ենթակա չէ (բացառությամբ այն դեպքերի, երբ բացասական տարբերությունն առաջանում է օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կարգավորող մարմնի կողմից հաստատված սակագների կիրառման արդյունքում): Շահութահարկով հարկման առումով հաշվանցման ոչ ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների՝ համախառն եկամտից նվազեցումը կատարվում է հետևյալ կարգով.

ա) նվազեցման ենթակա են ավելացված արժեքի հարկի միայն այն գումարները, որոնք վերաբերում են անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերին.

բ) ձեռքբերումների գծով ծախսագրումը կատարվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան:

գ) սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո:

#### **Հարց**

***ԼՂՀ ռեզիդենտը և ոչ ռեզիդենտ կազմակերպությունների միջև կնքված ապրանքների փոխադրման պայմանագրի համաձայն ոչ ռեզիդենտ կազմակերպությունը ԼՂՀ ռեզիդենտին պատկանող ապրանքները Արենքից տեղափոխել է մինչև ՀՀ Բագրապաշենի մաքսային կետ: ԼՂՀ ռեզիդենտ կազմակերպությունը, որպես հարկային գործակալ, կրու՞մ է արդյոք, աղբյուրի մոտ շահութահարկի հաշվարկման պարտավորություն:***

#### **Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ռեզիդենտի կողմից տրանսպորտային ծառայությունների մատուցումից (այն մասով, որը վերաբերում է բեռների, փոստի, ուղևորների և ուղեբեռների փաստացի փոխադրմանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ՀՀ) տարածքով) ստացված եկամուտները համարվում են ստացված դարաբաղյան աղբյուրներից: Ընդ որում, եթե ոչ ռեզիդենտի կողմից ներկայացված հաշիվներից պարզ չէ, թե տրանսպորտային ծառայությունների արժեքի որ մասն է վերաբերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ՀՀ) տարածքում այդ ծառայությունները մատուցելուն, ապա ոչ ռեզիդենտի կողմից այդ գործունեությունից ստացված եկամուտներն ամբողջությամբ համարվում են դարաբաղյան աղբյուրներից ստացված եկամուտներ և ԼՂՀ ռեզիդենտը պարտավոր է վճարման աղբյուրի մոտ ամբողջ գումարից պահել և բյուջե փոխանցել շահութահարկ 4 տոկոս դրույքաչափով:

**Հարց**

***Ո՞ր դեպքերում ՊՈԱԿ-ները շահութահարկ վճարող չեն հանդիսանում:***

**Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ՊՈԱԿ-ները շահութահարկ վճարող չեն հանդիսանում բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե (պետական, համայնքների) փոխանցվող եկամուտների մասով:

Բյուջետային հատկացումներից բացի ստացվող այլ եկամուտների մասով ՊՈԱԿ-ները չեն հանդիսանալու շահութահարկ վճարող, եթե այդ եկամուտները դրանց ստացման բյուջետային տարում ամբողջությամբ փոխանցվում են համապատասխան բյուջե, այսինքն՝ եթե եկամուտները պետական կամ համայնքների բյուջե փոխանցումները հաստատող վճարման հանձնարարականներով ակցեպտավորվել են համապատասխան բյուջե բանկի կողմից այդ եկամուտների ստացման բյուջետային տարում:

Բյուջետային տարվան հաջորդող տարվա առաջին ամսվա ընթացքում կառավարության որոշմամբ բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումը շարունակելու (եզրափակիչ շրջանառություն) դեպքում բյուջետային տարին ընդգրկելու է նաև այդ ամիսը՝ եզրափակիչ շրջանառության մեջ ներառվող բյուջետային հատկացումների և այլ եկամուտներին վերաբերող փոխանցումների մասով:

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածների համաձայն՝ ՊՈԱԿ-ների անհատույց ստացված ակտիվները եկամուտ չեն համարվում, և, համապատասխանաբար, դրանց գծով կատարված ծախսերը ծախս չեն դիտվում:

**Հարց**

***Հարկման առումով ո՞ր ծախսերն են համարվում ներկայացուցչական:***

**Պատասխան**

Ներկայացուցչական ծախսեր են համարվում հարկատուի կա-

տարած այն ծախսերը, որոնք կապված են փոխշահավետ համագործակցություն հաստատելու և այն պահպանելու նպատակով բանակցություններ վարելու համար այլ հարկատուների ներկայացուցիչների, ինչպես նաև հարկատուի խորհրդի ու վերատուգիչ հանձնաժողովի նիստին մասնակցելու համար այլ մասնակիցների ընդունման և սպասարկման հետ: Այդ ծախսերի մեջ մասնավորապես ներառվում են ներկայացուցիչների /մասնակիցների/ պաշտոնական ընդունելության /նախաճաշ, ճաշ կամ այլ համանման միջոցառում/, նրանց տրանսպորտային և հյուրանոցային սպահովման, կուլտուրական միջոցառումների կազմակերպման, բանակցությունների և կուլտուրական միջոցառումների ծրագրի ժամանակ բուֆետային սպասարկման, հուշանվերների, կազմակերպության հաստիքացուցակում չգտնվող թարգմանիչների ծառայության վճարման հետ կապված ծախսերը:

## ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

### **Հարց**

***Եկամտային հարկով հարկման ենթակա՞ են, արդյոք, ԼՂՀ ֆիզիկական անձանց կողմից ստացված շահաբաժինները:***

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկով հարկվող եկամուտը որոշելիս ֆիզիկական անձանց ստացած շահաբաժինների գումարը նվազեցվում է համախառն եկամտից (եկամտային հարկով չի հարկվում):

### **Հարց**

***Հարկային գործակալի կողմից աշխատողին վճարվող եկամուտներից արհեստակցական կազմակերպություններին մասհանվող գումարները ներառվո՞ւմ են, արդյոք, եկամտային հարկի հաշվարկման օբյեկտում:***

### **Պատասխան**

Այո: «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ եկամտային հարկով հարկվող օբյեկտը որոշելիս արհեստակցական կազմակերպություններին մասհանվող գումարները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

### **Հարց**

***Կազմակերպության և ֆիզիկական անձի միջև կնքված հանձնարարության պայմանագրի համաձայն կազմակերպությունը ապրանքների վաճառքից ստացված գումարները ֆիզիկական անձ հանձնարարողին վճարելու դեպքում կրո՞ւմ է, արդյոք, հարկային գործակալի պարտականություններ:***

### **Պատասխան**

Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկի պահում (զանձում) չեն իրականացնում, եթե նրանք հանդիսանում են հանձ-

նակատար և հանձնարարության պայմանագրի շրջանակներում այլ անձանցից ստացված գումարները վճարում են հանձնարարող ֆիզիկական անձանց:

**Հարց**

***Վարչու աշխատողներին վճարված օգնության գումարներից պահվում է, արդյոք, եկամտային հարկ և արտացոլվում եկամտային հարկի հաշվարկում:***

**Պատասխան**

Վարձու աշխատողներին վճարված միանվագ օգնության գումարներից, բացառությամբ աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով տրված օգնության գումարների, հարկային գործակալը պահում է եկամտային հարկ՝ 21 տոկոս դրույքաչափով և ներառում եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկի 1.8՝ «Այլ հարկվող եկամուտ» սյունակում:

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով տրված օգնության գումարները հանդիսանում են նվազեցվող եկամուտ այդ գումարը ստացող աշխատողի կամ նրա ընտանիքի անդամի համար և եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկի մեջ չեն ներառվում:

**Հարց**

***Բանկը վարկառու ֆիզիկական անձի վարկային պարտավորությունների ներման (զիջման) դեպքում կրում է, արդյոք, հարկային գործակալի պարտականություններ:***

**Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի կողմից ստացման ենթակա՝ հաշվեգրված (պահվել եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի

շրջանակներում ստացված) բոլոր եկամուտների հանրագումարն է: Նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ են դիտվում ստացվող վարկերի և փոխառությունների գումարները, բացառությամբ պարտատիրոջ կողմից վարկի կամ փոխառության գումարների զիջման կամ որևէ այլ ձևով այդ գումարները չվերադարձնելու մասին պարտատիրոջ հետ համաձայնության (այդ թվում՝ օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրանալու պահին): Այլ կերպ, վարկառու ֆիզիկական անձին ներված (զիջված) վարկի գումարներից բանկը որպես հարկային գործակալ աղբյուրի մոտ պետք է պահի և ԼՂՀ պետական բյուջե փոխանցի եկամտային հարկ՝ 21 տոկոս դրույքաչափով, իսկ ներված (զիջված) տոկոսների, տույժերի և տուգանքների գումարներից եկամտային հարկ չի պահվում:

#### **Հարց**

***Կազմակերպությունը՝ որպես հարկային գործակալ, կրո՞ւմ է եկամտային հարկի պարտավորություն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձից վարչակալված անշարժ գույքի վրա կատարված վերանորոգումների գումարի չափով:***

#### **Պատասխան**

Կազմակերպության կողմից անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձից վարձակալված անշարժ գույքի վրա կատարված ընթացիկ և հիմնական (կապիտալ) վերանորոգումների գումարները, վարձակալական պայմանագրի համաձայն, վարձատուի կողմից չփոխհատուցվելու դեպքում՝ կազմակերպությունը՝ որպես հարկային գործակալ, կատարված ընթացիկ վերանորոգումների գումարի չափով եկամտային հարկի պարտավորություն չի կրում, իսկ հիմնական (կապիտալ) վերանորոգումների մասով՝ վարձակալական պայմանագրի փաստացի լուծման դեպքում՝ չամորտիզացված մասի (հարկման նպատակով որոշվող մնացորդային գումարի) համար որպես հարկային գործակալ պետք է պահի և մինչև պայմանագրի լուծման ամսվան հաջորդող ամսվա 20-ը պետական բյուջե փոխանցի եկամտային հարկ՝ 21 տոկոս դրույքաչափով:

**Հարց**

***Արչակման նպաստից պահվում է, արդյոք, եկամտային հարկ:***

**Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարված նպաստների գումարները (բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարների) համարվում են համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ (եկամտային հարկ չի պահվում):

**Հարց**

***Կազմակերպությունը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումներով ձեռքբերումների մասով, արդյո՞ք, կրում է եկամտային հարկի պահման պարտավորություն:***

**Պատասխան**

Ոչ: «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով, ինչպես նաև կրճատ հաշիվ-ապրանքագրերով ձեռքբերումների մասով՝ անկախ դրանց չափից, ազատվում են որպես հարկային գործակալ եկամտային հարկը պահելու և բյուջե վճարելու պարտավորությունից:

**Հարց**

***Աշխատակցին աշխատանքից ազատելու դեպքում վճարվող վերջնահաշվարկի գումարը եկամտային հարկի ամփոփ հաշվարկում ներկայացվում է հաշվեգրման մեթոդով, թե՞ վճարման:***

**Պատասխան**

Հարկային գործակալը եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (գանձված) հարկը պետական բյուջե է փոխանցում ֆիզիկական անձանց բազային եկամտի (աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ) հաշվարկման (հաշվեգրման), իսկ այլ եկամուտ-

ների դեպքում՝ այդ եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ: Տվյալ դեպքում բազային եկամտի մեջ ներառված են նաև աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարները, որոնք եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում արտացոլվում են հաշվեգրման մեթոդով:

**Հարց**

***Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարը և՞րբ պետք է արտացոլվի եկամտային հարկի ամփոփ հաշվարկում:***

**Պատասխան**

Վարձու աշխատողներին վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները ներառվում են նրա համախառն եկամտի մեջ որպես այն ամսվա եկամուտ, երբ վճարվել են այդ նպաստները: Ընդ որում, «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼԳՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրանք ենթակա են վճարման անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

**Հարց**

***Հնարավո՞ր է, արդյոք, մինչև հաշվեկու ժամանակահատվածի ավարտը փյալ հաշվեկու ժամանակահատվածի համար ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:***

**Պատասխան**

Մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը եկամտային հարկի ամփոփ հաշվարկը հանձնելու դեպքում, այն համարվում է չընդունված:

**Հարց**

***Վարչու աշխատողը հերթափոխով ամսվա ընթացքում աշխատում է 15 օր: Ամենամյա արչակուրդային գումարը հաշվարկելիս միջին օրական աշխատավարձը ինչպե՞ս է հաշվարկվում:***

**Պատասխան**

ԼՂՀ Աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է՝ միջին ամսական աշխատավարձը բաժանելով 21-ի: Վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է՝ միջին ամսական աշխատավարձը բաժանելով 25-ի:

**Հարց**

***Գործատուների կողմից իրենց վարչու աշխատողների համար վճարվող առողջության ապահովագրական վճարները համարվո՞ւմ են, արդյոք, եկամտային հարկով հարկման օբյեկտ:***

**Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի համաձայն՝ գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով հանդիսանում են նվազեցվող եկամուտ (եկամտային հարկով հարկման ենթակա չեն), իսկ նշված չափը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասը ենթակա է հարկման՝ 21 տոկոս դրույքաչափով:

**Հարց**

***Ինչպե՞ս է իրականացվում հարկային գործակալի կողմից ֆիզիկական անչանց վճարված եկամուտներից ժամանակին չպահված եկամտային հարկի գումարի պահումը:***

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին երեք ամսվա համար, իսկ հարկի սահմանված չափից ավելի պահված գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք օրացուցային տարվա համար:

### **Հարց**

***ԼՂՀ քաղաքացին սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարանը վաճառում է ԼՂՀ ռեզիդենտ կազմակերպությանը: Առաջանում է, արդյոք, եկամտային հարկ ԼՂՀ քաղաքացուն վճարվող եկամտից:***

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, կազմակերպությունը պարտավոր է, որպես հարկային գործակալ, ֆիզիկական անձից բնակարան ձեռք բերելու դիմաց վճարվող եկամտից հաշվարկել և պահել եկամտային հարկ՝ 6 տոկոս դրույքաչափով:

### **Հարց**

***Օպարերկրացին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վաճառել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությանը՝ 50.0 հազ. դրամ արժեքով: Ընդ որում՝ օպարերկրացու կողմից այդ գույքի չեռքբերման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված հիմնավորող որևէ փաստաթուղթ բացակայում է: Կատարված գործարքի դիմաց եկամտային հարկ հաշվարկվում է:***

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, քանի որ բացակայում են օտարերկրացու կողմից այդ գույքի ձեռքբերման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը, օտարերկրացու կողմից գույքի օտարումից ստացած ամբողջ արժեքը (50.0 հազ. դրամ) համարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտ, որից առևտրային կազմակերպությունը հաշվարկելու է եկամտային հարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

### **Հարց**

*Անհատ ձեռնարկատերը հաշվեդուր փարվա ընթացքում սպրանքներ է մատակարարել փարքեր կազմակերպությունների և դուրս գրել հարկային հաշիվներ, սակայն այդ փարվա ընթացքում մատակարարված սպրանքների դիմաց վճարումները, կնքված պայմանագրերի համաչայն, գնորդ կազմակերպությունները կատարելու են հաջորդ փարվա հունվարին: Հանդիսանու՞մ է, արդյոք, անհատ ձեռնարկատերը փարեկան եկամուտների մասին հաշվարկներ կայացնող, եթե հաշվեդուր փարվա ընթացքում նա չի ստացել հայտարարագրման ենթակա այլ եկամուտներ:*

### **Պատասխան**

Քանի որ, «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն, անհատ ձեռնարկատերը ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամտի որոշման ժամանակ կիրառում է եկամուտների և ծախսերի հաշվառման հաշվեգրման եղանակը, այսինքն՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, ուստի նա հանդիսանում է տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնող և ձեռնարկատիրական գործունեությունից հաշվեգրված եկամուտներից հարկվող եկամուտը որոշելով՝ հաշվարկում և բյուջե է փոխանցում եկամտային հարկը:

### **Հարց**

*Օպարերկրացու կողմից ներդրում է կատարվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում չեռք բերված գույքի չեղով: Օպարերկրացու կողմից այդ գույքը չեռք է բերվել 100.0 հազ. դրամ արժեքով, իսկ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրում կատարելիս այն գնահատվել է 140.0 հազ. դրամի չափով: Նշված գործարքների վերաբերյալ առկա են օրենսդրությամբ սահմանված հիմնավորող փաստաթղթեր: Կատարված գործարքի դիմաց սրացված գումարը եկամտային հարկով հարկման առումով համարվում է, արդյոք, եկամուտ:*

### **Պատասխան**

Տվյալ դեպքում «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ներդրված գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից առաջացած դրական տարբերությունը (140.0-100.0=40.0 հազ. դրամ) օտարերկրացու համար համարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտ, որից պետք է հաշվարկվի եկամտային հարկ:

**«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼՂՀ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ  
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԳՐՎՈՂ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**Հարց**

***Ինչո՞ւմն է կայանում «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված՝ հիփոթեքային վարկերի մատչելիության բարձրացման նպատակով տրամադրվող աջակցության էությունը:***

**Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված աջակցության շրջանակներում հիփոթեքային վարկ ստացած վարձու աշխատողներին եռամսյակային (իսկ անհատ ձեռնարկատերերին՝ տարեկան) կտրվածքով կվերադարձվեն աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարները՝ հիփոթեքային վարկի շրջանակներում վճարված տոկոսների գումարների չափով:

**Հարց**

***Ովքե՞ր են կարող օգտվել «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված հիփոթեքային վարկերի մատչելիության բարձրացման նպատակով տրամադրվող աջակցությունից:***

**Պատասխան**

Աջակցությունից կարող են օգտվել այն վարձու աշխատողները և անհատ ձեռնարկատերերը, ովքեր ԼՂՀ կամ ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից (բանկ կամ վարկային կազմակերպություն) ստացել են հիփոթեքային վարկ և այն ուղղել են.

- ԼՂՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից բնակարանի ձեռքբերմանը, կամ.

- ԼՂՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում պետությունից բնակարանի ձեռքբերմանը, կամ.

- ԼՂՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան

րան բնակելի շենքում պետության ստեղծած հիմնադրամից բնակարանի ձեռքբերմանը, կամ.

- ԼՂՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում համայնքից բնակարանի ձեռքբերմանը, կամ.

- ԼՂՀ տարածքում անհատական բնակելի տան կառուցմանը:

#### **Հարց**

***Մահմանվա՞ծ է, արդյոք, եկամտային հարկի գումարների վերադարձման առավելագույն չափ:***

#### **Պատասխան**

Եկամտային հարկի գումարները վերադարձվում են ԼՂՀ կամ ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից (բանկ կամ վարկային կազմակերպություն) ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների (բացառությամբ սուբսիդավորման հաշվին վճարված) գումարների չափով, բայց ոչ ավելի, քան`

1) համապատասխան եռամսյակի ընթացքում տվյալ վարձու աշխատողին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված եկամտային հարկի գումարը.

2) համապատասխան հաշվետու տարվա ընթացքում անհատ ձեռնարկատիրոջ կողմից հաշվարկված եկամտային հարկի գումարը:

#### **Հարց**

***Կարո՞ղ է, արդյոք, եկամտային հարկի գումարների վերադարձը ազդեցություն ունենալ ապագայում սրացվելիք կենսաթոշակի չափի վրա:***

#### **Պատասխան**

Եկամտային հարկի գումարների վերադարձը որևէ առնչություն չունի ապագայում ստացվելիք կենսաթոշակի չափի հետ:

**Հարց**

***Կարո՞ղ եմ, արդյոք, շահառուի ընդամենի անդամները կամ այլ անձինք նույնպես սրանալ իրենց եկամուտներից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձը:***

**Պատասխան**

Եկամտային հարկի գումարների վերադարձը կարող են ստանալ բոլոր այն անձինք (այդ թվում՝ վարկառուի ընտանիքի անդամները), ովքեր միաժամանակ.

- տվյալ հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի համաձայն հանդիսանում են համավարկառու,

- հանդիսանում են ձեռք բերված (ձեռք բերվող) բնակարանի կամ կառուցված (կառուցվող) անհատական բնակելի տան համասեփականատեր:

**Հարց**

***Ո՞ր մարմինն է անհրաժեշտ դիմել եկամտային հարկի գումարների վերադարձը սրանալու նպատակով:***

**Պատասխան**

Եկամտային հարկի գումարների վերադարձը ստանալու նպատակով ԼՂՀ կառավարության 26.05.2015թ. N 306-Ն որոշմամբ հաստատված՝ «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման» կարգի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի կամ անհատական բնակելի տան գտնվելու վայրի հարկային մարմին:

**Հարց**

***Հաշվեքու եռամսյակի (տարվա) ավարտից հետո ի՞նչ ժամկետում անչը կարող է դիմել եկամտային հարկի գումարների վերադարձը սրանալու համար:***

### **Պատասխան**

Եկամտային հարկի գումարների վերադարձը ստանալու նպատակով՝

- վարձու աշխատողները կարող են դիմել, եթե իրենց գործատուն ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի ամփոփ հաշվարկով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հայտարարագրված հարկային պարտավորությունը,

- անհատ ձեռնարկատերերը կարող են դիմել, եթե նրանք ամբողջությամբ կատարել են տվյալ հաշվետու տարվա համար հարկային մարմին ներկայացված՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունը:

### **Հարց**

***Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել եկամտային հարկի գումարների վերադարձը ստանալու նպատակով:***

### **Պատասխան**

Եկամտային հարկի գումարների վերադարձը ստանալու նպատակով հարկային մարմին առաջին անգամ անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- 1) սահմանված ձևի դիմում,
- 2) վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ,
- 3) վարկառուի հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար, հարկ վճարողի հաշվառման համար (առկայության դեպքում),
- 4) հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի բնօրինակ կամ այդ պայմանագրի նոտարական կարգով վավերացված պատճեն և գրավադրված գույքի սեփականության (կամ գրավադրված գույքի նկատմամբ իրավունքի) պետական գրանցման վկայական,
- 5) հիփոթեքային վարկը տրամադրած՝ ԼԳՀ կամ ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության (բանկ կամ վարկային կազմակերպություն) կողմից տրված տեղեկանք՝ հաշվետու ժամանակահատվածի համար հաշվեգրված և վարկառուի կողմից վճարված տոկոս-

ների գումարների մասին,

6) ԼՂՀ կառավարության անշարժ գույքի կադաստրի վարչության կողմից տրված տեղեկանք՝ բնակարանն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված լինելու մասին, կամ անհատական բնակելի տան շինարարության թույլտվություն: Սույն կետով պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվում, եթե բնակարանը ձեռք է բերվում պետությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից կամ համայնքից:

7) ԼՂՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում բնակարանի առքուվաճառքի պայմանագիր:

Հետագա հաշվետու ժամանակահատվածներում վճարված եկամտային հարկի գումարները վերադարձնելու համար վարկառուին հարկային մարմին է ներկայացնում եկամտային հարկի վերադարձի համար սահմանված ձևի դիմում, ինչպես նաև հիփոթեքային վարկը տրամադրած՝ ԼՂՀ կամ ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության (բանկ կամ վարկային կազմակերպություն) կողմից տրված տեղեկանքը՝ հաշվետու ժամանակահատվածի համար հաշվեգրված և վարկառուի կողմից վճարված տոկոսների գումարների մասին, եթե մինչև այդ ներկայացված պահանջվող մյուս տեղեկատվությունը մնացել է անվորփոխ:

#### **Հարց**

***Եթե անչն օգտվում է բնակարանային ապահովության այլ պետական ծրագրերից, կարո՞ղ է միաժամանակ օգտվել նաև այս աջակցությունից:***

#### **Պատասխան**

Անձը կարող է օգտվել «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված հիփոթեքային վարկերի մատչելիության բարձրացման նպատակով տրամադրվող աջակցությունից՝ անկախ նրա՝ այլ ծրագրերից օգտվելու հանգամանքից: Սակայն եկամտային հարկի գումարների վերադարձը կատարվում է միայն քաղաքացու կողմից վճարված տոկոսների գումարների չափով, առանց սուբսիդավորման հաշվին վճարված տոկոսների գումարների:

**Հարց**

***Ի՞նչ եղանակով են վերադարձվում եկամտային հարկի գումարները:***

**Պատասխան**

Եկամտային հարկի գումարները վերադարձվում են անկանխիկ՝ շահառուի կողմից հարկային մարմին ներկայացված դիմումում նշված բանկի հաշվի համարին փոխանցելու միջոցով:

**Հարց**

***Ո՞ր դեպքում է կարող մերժվել վարկառուի՝ եկամտային հարկի գումարների վերադարձման մասին դիմումը:***

**Պատասխան**

Եկամտային հարկի վերադարձման մասին դիմումը մերժվում է, եթե այն ներկայացնելու պահին համապատասխան եռամսյակի ընթացքում տվյալ վարձու աշխատողին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված կամ համապատասխան հաշվետու տարվա ընթացքում անհատ ձեռնարկատիրոջ կողմից հաշվարկված եկամտային հարկի գումարներն ամբողջությամբ մարված չեն, և (կամ) եթե չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթերը:

**Հարց**

***Վարձու աշխատողին եկամտային հարկի վերադարձվող գումարի չափում ներառվում է, արդյո՞ք, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի գումարից պահված եկամտային հարկի գումարը:***

**Պատասխան**

Վարձու աշխատողին եկամտային հարկի վերադարձվող գումարի չափը որոշվում է միայն հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների գումարից՝ 21 տոկոս դրույքաչափով. հաշվետու եռամսյակի որևէ ամսում հաշվարկված աշխատավարձից և դրան

հավասարեցված վճարումներից տարբերվող այլ հարկվող եկամուտներ (Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստ, ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված չափը գերազանցող առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարներ, ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված չափերից ավելի վճարված փոխհատուցման վճարներ, օգնության գումարներ և այլն) վճարված լինելու դեպքում այդ եկամուտների մասով հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները վերադարձման ենթակա չեն:

#### **Հարց**

***Եթե ամուսիններից մեկը հանդես է գալիս որպես վարկառու և բնակարանի սեփականատեր, իսկ մյուսը՝ համավարկառու և համասեփականատեր, ապա ի՞նչ կարգով են վերադարձվում ամուսիններից յուրաքանչյուրի աշխատավարձից պահված եկամտային հարկի գումարները:***

#### **Պատասխան**

Վարկի տոկոսները վճարելու պարտավորությունն առաջնահերթ կրում է վարկառուն, ուստի հարկային մարմինը հարկի վերադարձի գործընթացը սկսում է դիմում ներկայացրած վարկառուի եռամսյակի ընթացքում վճարված եկամտային հարկի և վարկի տոկոսի գումարների համադրությամբ: Եթե վարկառուի եկամտային հարկի գումարը փոքր է վճարված տոկոսի գումարից, հարկային մարմինը հարկի վերադարձի գործընթացը շարունակում է համավարկառուի դիմումում նշված հարկի գումարի և վարկի տոկոսի մնացորդի համադրությամբ:

#### **Հարց**

***«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 9.1-ին հոդվածը տարածվում է, արդյոք, այն դեպքերի վրա, երբ վարձու աշխատողը ԼՂՀ տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով ԼՂՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից ստացել է հիփոթեքային վարկ և այն փաստացի ուղղել անհատական բնակելի տան կառուցման համար հողամասի չեռքբերմանն ու փաստացի անհատական բնակելի տան կառուցմանը:***

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 9.1-ին հոդվածի դրույթները գործում են միայն անհատական բնակելի տան շինարարության համար հիփոթեքային վարկերի ստացման պայմանագրերի մասով, իսկ հողամասի ձեռքբերման նպատակով ստացված հիփոթեքային վարկերի պայմանագրերի վրա օրենքի նշված արտոնությունը չի տարածվում:

### **Հարց**

*Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով եկամտային հարկը վերադարձնելու ժամանակ ի՞նչ կարգով է հարկային մարմինը տեղեկանում այն անձի վճարված եկամտային հարկի գումարի մեծության վերաբերյալ, ում վերաբերող տեղեկատվությունը ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն:*

### **Պատասխան**

Սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության ներքո գտնվող վարձու աշխատողներին եկամտային հարկի գումարների վերադարձը ապահովելու համար, նրանց կողմից ԼՂՀ կառավարության 26.05.2015թ. «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 306-Ն որոշմամբ սահմանված փաստաթղթերի հետ միասին, գույքի գտնվելու վայրի հարկային մարմին է ներկայացվում նաև հարկային գործակալի պաշտոնապես տրված տեղեկանքը՝ տվյալ եռամսյակում վարձու աշխատողի աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից պահված եկամտային հարկի գումարի վերաբերյալ:

### **Հարց**

*Մնուսիներից մեկը հանդես է գալիս որպես վարկառու և անհատական բնակելի տան սեփականատեր, իսկ մյուսը՝ համավարկառու և համասեփականատեր: Կարող են, արդյո՞ք, երկուսն էլ օգտ-*

***վել եկամտային հարկի գումարների վերադարձման արտոնությունից, եթե անհատական բնակելի տան շինարարության բույլավորությունը չհակերպված է ամուսիններից մեկի անվամբ:***

**Պատասխան**

Ամուսիններից երկուսն էլ օրենքով սահմանված կարգով կարող են օգտվել եկամտային հարկի վերադարձի արտոնությունից:

**Հարց**

***Անշարժ գույքի առքուվաճառքի, վարկային և գրավի պայմանագիրը կնքվել է, օրինակ, 2015թ. մայիս ամսին: Նշված դեպքում 2015 թվականի երկրորդ եռամսյակի դիմումի մեջ, արդյոք, պե՞տք է ներառել սպրիչ ամսվա եկամտային հարկի վճարված գումարը:***

**Պատասխան**

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման նպատակով «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 9.1-ին հոդվածով սահմանված չէ եռամսյակների կամ տարվա՝ ըստ ամիսների դիտարկման դրույթ, ուստի վարձու աշխատողի կողմից եռամսյակի 2-րդ կամ 3-րդ ամսում (անհատ ձեռնարկատիրոջ կողմից՝ տարվա ընթացքում) հիփոթեքային վարկի պայմանագիր կնքելու դեպքում վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարները վերադարձման ենթակա են այդ հաշվետու եռամսյակի (հաշվետու տարվա) համար հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարից ոչ ավելի չափով:

## ԱԿՑԻՉԱՅԻՆ ՀԱՐԿ

### **Հարց**

***Ընկերությունը խաղողի գինեգործության կոնյակի սպիրտ է արտադրում և իրացնում: Նշված գործարքը ենթակա՞ է, արդյոք, ակցիզային հարկով հարկման:***

### **Պատասխան**

Համաձայն «Ակցիզային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ խաղողի գինեգործության ստացված կոնյակի սպիրտը ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանք չէ:

### **Հարց**

***Առեկտրի հարկ վճարող կազմակերպությունը խանութում վաճառում է տեղական արտադրության ալկոհոլային խմիչքներ: Նշված ապրանքների օտարման ինչպիսի՞ նվազագույն գին է սահմանված օրենքով:***

### **Պատասխան**

«Ակցիզային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ԼՂՀ-ում արտադրված՝ ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող ապրանքների ԼՂՀ-ում օտարման (այդ թվում՝ անհատույց) դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ՝ ակցիզային հարկը և (կամ) ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել 1 լիտրի համար 3000 ՀՀ դրամից՝ 100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով:

### **Հարց**

***Որքա՞ն է սահմանված ԼՂՀ-ում արտադրվող օդու համար ակցիզային դրոշմանիշի գումարը:***

### **Պատասխան**

«Ակցիզային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 1<sup>3</sup>-րդ մասի համաձայն՝ ԼՂՀ-ում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ալկոհոլային խմիչքների համար նախատեսված ակցիզա-

յին յուրաքանչյուր դրոշմանիշի ձեռքբերման համար վճարվում է 50 դրամ:

**Հարց**

***Ակցիզային հարկ վճարողի կողմից ճշտված հաշվարկներ ներկայացնելիս, եթե դրանք ներկայացվում են մի քանի հաշվեկրու ժամանակաշրջանների համար, կիրառվում է, արդյոք, մեկից ավելի ճշտված հաշվարկներ ներկայացնելու համար տուգանք:***

**Պատասխան**

«Ակցիզային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տուգանքը կիրառվում է միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար մեկից ավելի ճշտված հաշվարկներ ներկայացնելու համար: Եթե հարկ վճարողի կողմից ներկայացվող ճշտված հաշվարկները վերաբերում են տարբեր ժամանակահատվածների և դրանց թիվը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար չի գերազանցում մեկը, տուգանքը չի կիրառվում:

**Հարց**

***ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, պետությանը հանձնված փորագուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած չդրոշմավորված ապրանքներն իրացնելիս ենթակա է, արդյոք, դրոշմավորման:***

**Պատասխան**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, հօգուտ պետության տիրագուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած ակցիզային հարկով հարկման ենթակա չդրոշմավորված ապրանքների իրացումը կատարվում է ակցիզային դրոշմանիշներով, որոնք տրամադրվում են անհատույց:

**Հարց**  
**Հնարավո՞ր է, արդյոք, հարկային մարմիններից շեռք բերված ակցիզային դրոշմանիշների վերադարձ:**

**Պատասխան**

«Ակցիզային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի և ԼՂՀ կառավարության 11.07.2000թ. N 138 որոշման համաձայն՝ հարկ վճարողների կողմից ձեռք բերված ակցիզային դրոշմանիշները եռամսյա ժամկետում չօգտագործելու դեպքում ենթակա են վերադարձման ձեռքբերման օրվանից մինչև եռամսյա ժամկետը լրանալու օրը ներառյալ, ընդ որում, ակցիզային դրոշմանիշները չօգտագործված չեն համարվում, եթե դրանք փակցված են դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողների մոտ առկա պատրաստի արտադրանքի վրա: Վնասված ակցիզային դրոշմանիշները ներկայացվում են հարկային մարմին՝ դրանք փակցնելով առանձին էջերի վրա և ապահովելով հետևյալ պայմանները՝

- ակցիզային դրոշմանիշները պետք է փակցվեն առանց ծալքերի և անհարթությունների.
- պետք է պարզ երևան ակցիզային դրոշմանիշի սերիան և դրա կենտրոնական մասը.
- ակցիզային դրոշմանիշի պատռվածքի դեպքում պատռված մասերը պետք է միացվեն.
- վերադարձվող յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի մակերեսը (այդ թվում՝ հավաքված առանձին մասերից) պետք է կազմի իր սկզբնական չափի առնվազն 60 տոկոսը:

Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշները սահմանված կարգով հարկ վճարողի կողմից չվերադարձվելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու դեպքերում՝ չվերադարձված կամ հետ չընդունված ակցիզային դրոշմանիշների թվին, տեսակին և տարողությանը համապատասխան պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Ակցիզային հարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով վճարվում է ակցիզային հարկ:

**Հարց**

***Մինչև 9 տոկոսը ներառյալ սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքները (ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող) ենթակա՞ են, արդյոք, ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման:***

**Պատասխան**

ԼՂՀ կառավարության 11.07.2000թ. N 138 որոշման համաձայն՝ ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող, ԼՂՀ-ում արտադրված մինչև 9 տոկոսը ներառյալ սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքները ենթակա չեն ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման: Դրանք, «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9.2-րդ հոդվածի համաձայն, ենթակա են դրոշմավորման դրոշմապիտակներով:

## ԱՎԵԼԱՅՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

### **Հարց**

***Ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա՞ են, արդյոք, ստացված սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհների գումարները:***

### **Պատասխան**

Ավելացված արժեքի հարկով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում) սուբսիդիաների, սուբվենցիաների, դրամաշնորհների կամ այլ ձևով այնպիսի գումարների ստացումը, որոնց դիմաց գումարներ ստացողների մոտ, ըստ էության, ապրանքներ մատակարարելու (ծառայություններ մատուցելու) պարտավորություն չի առաջանում: Այդ գումարները ապրանքների մատակարարման (ծառայությունների մատուցման) դիմաց տրամադրվելու դեպքում ենթակա են ավելացված արժեքի հարկով հարկման օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

### **Հարց**

***Կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախարեսող գործակալության պայմանագրերի դեպքերում ո՞րն է համարվում հարկվող շրջանառություն գործակալի համար:***

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼԳՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքում կոմիսիոնների կամ գործակալի մոտ ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը (առանց ավելացված արժեքի հարկի):

**Հարց**

***Ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա՞ է, արդյոք, կազմակերպության լուծարման դեպքում գույքը սեփականության իրավունքով հիմնադրին անցնելու գործարքը:***

**Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև ոչ առևտրային կոոպերատիվների լուծարման ընթացքում դրանց կողմից սեփականության իրավունքի օբյեկտների և այլ գույքային իրավունքների օտարումը, այդ թվում՝ պետության և երրորդ անձանց հանդեպ պարտավորությունները կատարելուց (մարելուց հետո բաժնետերերի, հիմնադիրների, փայամասնակիցների միջև բաշխումը (օտարումը) ենթակա է ավելացված արժեքի հարկով հարկման՝ սահմանված ընդհանուր կարգով, բացառությամբ կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ներդրում կատարած ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետերերի, հիմնադիրների, փայամասնակիցների կողմից ներդրված համապատասխան գույքի հետ ստացումը՝ ներդրման պահին որոշված արժեքը չգերազանցող չափով:

**Հարց**

***Ապրանքների անհատույց մատակարարման կամ իրական արժեքից 20 տոկոսից ավելի ցածր գներ (մասնակի հատուցում) կիրառելու դեպքում, ինչպե՞ս է որոշվում ավելացված արժեքի հարկով հարկման օբյեկտը:***

**Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապրանքների անհատույց մատակարարման (ծառայությունների անհատույց մատուցման) կամ այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20 տոկոսից ավելի ցածր գներ (մասնակի հատուցում), որպես ավելացված արժեքի հարկով հարկման օբյեկտ է համարվում այդպիսի (նույնանման) գործարքների համար համեմատելի հանգամանքներ:

րում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի, վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը:

Առևտրային գեղջերի կիրառման դեպքում «իրական արժեքը»՝ հարկ վճարողի կողմից հայտարարված վաճառքի գինն է, որի նկատմամբ կիրառվել է գեղջը: Արդյունքում վաճառքի գնից 20 տոկոսից ավելի գեղջի դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը ընդունվում է «իրական արժեքի» 80 տոկոսը կազմող մեծությունը:

Վաճառքի ցածր գների կիրառման դեպքում «իրական արժեքը»՝ այդպիսի (նույնանման) գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող մեծության, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության 80 տոկոսը կազմող մեծությունն է:

#### **Հարց**

***Ինչպիսի՞ գյուղատնտեսական ծառայություններ են ազատված ավելացված արժեքի հարկից:***

#### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 34-րդ կետի համաձայն՝ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ավելացված արժեքի հարկից ազատվում են գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ընթացքում գյուղատնտեսական տեխնիկայով կատարվող հողի մշակման, ցանքսի, տունկի, ցանքսերի և այգիների խնամքի, պարարտանյութերի ցրման, թունաքիմիկատների սրսկման և հունձի աշխատանքները:

**Հարց**

***Դեղատարներում բժշկական պարագաների իրացումն ազատվում օ՞մ է, արդյոք, ավելացված արժեքի հարկից:***

**Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի և ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 19.04.2004թ. N 17/Ղ հրամանի համաձայն՝ այն պարագաների իրացումը, որոնք կարող են օգտագործվել նաև ոչ բժշկական նպատակներով, ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե այդ պարագաները իրացվում են բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձանց:

**Հարց**

***Կազմակերպությունը հանձնարարության պայմանագրի հիման վրա չեռք է բերում գյուղատնտեսական մշակաբույսեր և հանձնում պրինցիպալին (հանձնարարողին): Տվյալ պարագայում հանձնակատարի սրացած միջնորդավճարը հարկվում օ՞մ է, արդյոք, ավելացված արժեքի հարկով:***

**Պատասխան**

Հանձնարարության պայմանագրով իրականացվող ծառայությունների նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունները չեն կիրառվում (արտոնությունը կիրառում են այն անձինք, որոնց մոտ ձևակերպվում է այդ ապրանքների իրացման շրջանառությունը):

**Հարց**

***Ոչ իրացման նպատակով չեռք բերված (ներմուծված) բեռնաուղեորատար մեքենաների դիմաց մատակարարներից սրացված հարկային հաշիվներում (սպրանքների ներմուծման մաքսային հայրարարագրերում) առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա օ՞ են հաշվանցման:***

### **Պատասխան**

Ոչ իրացման նպատակով բեռնաուղևորատար մեքենաներ ձեռք բերելու դեպքում մատակարարների հարկային հաշիվներում (ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա են հաշվանցման՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ, 23-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածներով սահմանված պայմանները բավարարելու դեպքում:

### **Հարց**

***Հարկ վճարողը ո՞ր դեպքերում է ներկայացնում ամսական ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ-ի) հաշվարկ:***

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ այն անձանց համար, որոնց ապրանքների մատակարարումից, ծառայությունների մատուցումից, այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ, հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 60 մլն դրամը, ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Ընդ որում, 60 մլն դրամ շեմը որոշելիս հաշվի է առնվում թվարկված բոլոր գործարքների ընդհանուր հասույթը, մասնավորապես, հարկի 20 տոկոս, 0 տոկոս դրույքաչափով հարկվող, ավելացված արժեքի հարկից ազատված, առևտրի հարկով կամ հաստատագրված վճարներով հարկվող գործարքներից ստացված հասույթը: Նշված հասույթի մեջ չեն ներառվում անուղղակի հարկերը:

### **Հարց**

***Եթե հաշվեքու ամսում առևտրային կազմակերպությունը իրացման շրջանառություն չի ունեցել, սակայն հաշվեքու ամսում սրացել է հարկային հաշիվներ, որոնց գումարների մեջ ներառված է ավելացված արժեքի հարկի գումարը և նույն ամսում բանկային փոխանցմամբ մարտահարարին կատարել է վճարում, արդյո՞ք, կազմակերպությունը կարող է հաշվանցել ավելացված արժեքի հարկի այդ գումարները հաշվեքու ամսում:***

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ և 23-րդ հոդվածների համաձայն՝ ավելացված արժեքի հարկի հաշվանցում կարող են կատարել ավելացված արժեքի հարկ վճարող՝ օրենքի 6-րդ հոդվածում նշված՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ իրականացրած անձինք: Ըստ այդմ, ընկերությունը հաշվանցման իրավունք է ձեռք բերում այն հաշվետու ժամանակաշրջանից սկսած, որում իրականացրել է ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, այսինքն համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող: Հետագա հաշվետու ժամանակահատվածներում իրացման շրջանառություն չունենալու դեպքում, եթե բավարարված և պահպանված են օրենքի 20-րդ, 23-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածների պահանջները, ընկերությունը կարող է դրանց մասով կատարել հաշվանցումներ:

### **Հարց**

*Հաշվեդու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարները հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարներին գերազանցելու դեպքում գերազանցող մասը ե՞րբ է հաշվանցվում:*

### **Պատասխան**

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածի՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարները հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները գերազանցելու դեպքում գերազանցող մասը, բացառությամբ ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով սահմանված կարգով որոշվող գումարների, հաշվանցվում է հետագա ժամանակաշրջաններում ավելացված արժեքի հարկի հաշվարկներով բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների հաշվին:

**Հարց**

***Պահպարվորյան պայմանագրով պահառուի մոտ n<sup>ր</sup>ն է ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության առաջացման պահը:***

**Պատասխան**

Ի պահ վերցված գույքի հետ վերադարձման պահին, ԼՂՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն, պահատուի հանդեպ պահառուի պարտավորությունը կատարված է: Ըստ այդմ՝ պահառուի մոտ ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության առաջացման պահ պետք է համարվի այդ գույքի հետ վերադարձման պահը:

**Հարց**

***Համառայն վարչատուրի և վարչակալի միջև կնքված վարչակալական պայմանագրի՝ վարչակալի կողմից վարչակալական վճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ: Տվյալ պարագայում վարչատուրի մոտ ե<sup>ր</sup>բ է առաջանալու ավելացված արժեքի հարկի հաշվարկման պարտավորությունը:***

**Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ծառայությունների մատուցման, ինչպես նաև դրա հետ կապված հարկային պարտավորության (ավելացված արժեքի հարկի հաշվարկման) ծագման պահ է համարվում այն պահը, երբ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին:

Վարձակալության պայմանագրի պարագայում հարկման առումով ծառայությունը մատուցված համարելու պահ է համարվում այն պահը, որը գործարար շրջանակներում ընդունված սովորույթներին համապատասխան, համարվում է ծառայությունը մատուցված համարելու պահ: Մասնավորապես, ԼՂՀ Քաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն, գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավա-

ռում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից:

**Հարց**

***Ավելացված արժեքի հարկի գծով սխալներն ինքնուրույն հայտնաբերելիս ո՞ր դեպքերում կարող է սահմանափակվել հարկ վճարողի կողմից ճշտված հաշվարկների ներկայացման հնարավորությունը:***

**Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշգրտման արդյունքներով չեն կարող ներկայացվել ճշտված հաշվարկներ, եթե դրանք վերաբերում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններին, ինչպես նաև ավելացված արժեքի հարկ վճարող չհանդիսացող անձանց կողմից դուրս գրված հարկային հաշիվներին, այն ապրանքներին և ծառայություններին, որոնք ազատված են ավելացված արժեքի հարկից և հարկման օբյեկտ չհանդիսացող կամ գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին: Միաժամանակ, «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն, ճշտված հաշվարկներ չեն կարող ներկայացվել, եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի:

**Հարց**

***Ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա՞ են, արդյոք, ոռոգման ջրի մատակարարման գործարքները:***

**Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 33-րդ կետի համաձայն՝ ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման գործարքները մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ազատվում են ավելացված արժեքի հարկից:

**Հարց**

**«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 27-րդ կետի համաչափն՝ ո՞ր թանկարժեք մեխաղններից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատների իրացումն է ազատվում ավելացված արժեքի հարկից:**

**Պատասխան**

Թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատներն են՝

Արծաթը (ներառյալ՝ արծաթ՝ ոսկու և պլատինի գալվանական պատվածքով) չմշակված, կիսամշակված կամ փոշու տեսքով (ԱՏԳ-ԱԱ 7106), ոսկին (ներառյալ՝ պլատինի գալվանական պատվածքով) չմշակված, կիսամշակված կամ փոշու տեսքով (ԱՏԳ-ԱԱ 7108), ոչ թանկաժեք մետաղները կամ արծաթը, երեսապատված (դրվագված) ոսկով, չմշակված կամ կիսամշակված (ԱՏԳ-ԱԱ 7109), չմշակված կամ կիսամշակված կամ փոշու տեսքով պլատին (ԱՏԳ-ԱԱ 7110), ոսկերչական իրերը և դրանց մասերը՝ թանկարժեք մետաղներից կամ մետաղներից երեսապատված (դրվագված) ոսկով (ԱՏԳ-ԱԱ 7113), այլ ապրանքները թանկարժեք մետաղներից կամ մետաղներից երեսապատված (դրվագված) ոսկով (ԱՏԳ-ԱԱ 7115):

**Հարց**

**Ի՞նչ կարգ է նախատեսված մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման համար:**

**Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման համար սահմանված է առանձնահատուկ կարգ: Որոշ դեպքերում մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարներն ընդհանրապես ենթակա չեն հաշվանցման: Ուստի օրենքի տվյալ նորմի ճիշտ կիրառման առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անձը ոչ իրացման նպատակով (օրինակ՝ կազ-

մակերպության կարիքների համար) ներմուծել կամ ձեռք է բերել մարդատար ավտոմեքենա, որի համար սահմանված կարգով վճարել է ավելացված արժեքի հարկ, ապա տվյալ դեպքում ավտոմեքենայի համար վճարված ավելացված արժեքի հարկի գումարը ենթակա չէ հաշվանցման և պետք է ավելացվի ավտոմեքենայի ձեռքբերման արժեքին:

Հետագայում այդ ավտոմեքենան իրացնելիս հարկ վճարողի մոտ առաջանում է ավելացված արժեքի հարկի հարկային պարտավորություն, որից կարելի է հաշվանցել իրացման պահին ավտոմեքենայի մնացորդային արժեքի նկատմամբ հաշվարկային եղանակով հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարը:

### ***Օրինակ.***

2015 թվականի փետրվարի 5-ին կազմակերպությունը ոչ իրացման նպատակով ձեռք է բերել «ՎԱԶ-2121» մակնիշի երկու համանման ավտոմեքենա, ընդհանուր գումարով 6325.0 հազ. դրամ, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ՝ 1054.4 հազ. դրամ, որոնք շահագործման են հանձնվել մարտի 1-ին: Հետագայում մեքենաներից մեկը 2015թ. սեպտեմբերի 1-ին իրացվել է այդ կազմակերպության կողմից՝ 3000.0 հազ. դրամով, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գումար 500.0 հազ. դրամ:

***Պարզաբանում.*** Բերված օրինակում հարկ վճարողը ոչ իրացման նպատակով ձեռք բերված մեքենաների դիմաց վճարած ավելացված արժեքի հարկի գումարը (1054.4 հազ. դրամ) պարտավոր է միացնել մեքենայի ձեռքբերման արժեքին:

2015 թ. սեպտեմբերին մեքենաներից մեկի իրացման ժամանակ առաջանում է ավելացված արժեքի հարկի պարտավորություն՝ 500.0 հազ. դրամի չափով: Այդ նույն ժամանակ թույլատրվում է կատարել նաև մեքենայի ձեռքբերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարի մի մասի հաշվանցում, որը որոշվում է հետևյալ կերպ.

2015 թվականի փետրվարին մեկ մեքենայի արժեքը՝ ավելացված արժեքի հարկի հետ միասին, ձեռքբերման պահին կազմել է 3162.5 հազ. դրամ (6325.0:2): Հիմք ընդունելով մեքենաների համար պայմանականորեն ընտրված ամորտիզացիոն ժամկետը 5 տարի՝ մեկ մեքե-

նայի ամորտիզացիոն տարեկան մեծությունը կկազմի 632.5 հազ. դրամ (3162.5:5), իսկ 2015 թվականի 6 ամսվա համար՝ 316.25 հազ. դրամ (2015 թվականի մարտ-օգոստոս): Իրացման պահին իրացվող մեքենայի մնացորդային արժեքը կկազմի 2846.25 հազ. դրամ (3162.5-316.25): Իրացման պահին մեքենայի մնացորդային արժեքից 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկվում է ավելացված արժեքի հարկի գումարը՝ 474.47 հազ. դրամ (2846.25 x 16.67%), որը ենթակա է հաշվանցման:

Այսինքն, տվյալ դեպքում մեքենայի իրացումից բյուջե վճարման ենթակա գումարը կկազմի 25.53 հազ. դրամ (500.0-474.47):

Վերը նշված օրինակի դեպքում, եթե մեքենան իրացվեր, օրինակ՝ ձեռքբերման պահից 6 տարի հետո, ապա մեքենայի իրացումից ավելացված արժեքի հարկը կհաշվարկվեր օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Տվյալ դեպքում, մեքենայի ձեռքբերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարից հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումար չի առաջանա, քանի որ մեքենան մնացորդային արժեք չի ունենա (մեքենայի արժեքը ամբողջությամբ կամորտիզացվի (կլրանա ամորտիզացիոն ժամկետը)):

#### **Հարց**

***Ուսումնական հաստատությունները քաղժառայության համակարգի աշխատողների որակավորման և վերաորակավորման դասընթացներ կազմակերպելու դեպքում ազատվում են ավելացված արժեքի հարկից:***

#### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի և ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 03.05.04թ. թիվ 22/Գ հրամանի համաձայն՝ որակավորման և վերաորակավորման ուսումնական հաստատությունների ուսման վարձի ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունը տարածվում է այն ուսումնական հաստատությունների վրա, որոնք իրականացնում են գիտական և մշակույթի մի շարք ուղղությունների գծով մասնագիտական հետբուհական կրթական ծրագրեր, մասնավորապես «Կրթության մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածի համա-

ձայն՝ հետքուիական և մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական հիմնարկների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում հետազոտողի կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով, ինչպես նաև ուսումնական կենտրոններում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրերով: Քանի որ քաղաքացիական ծառայողների որակավորման և վերատրակավորման դասընթացները չեն բավարարում վերոնշյալ նորմատիվ ակտերի պահանջներին, հետևաբար ուսման վճարներից ստացված հասույթը ենթակա է հարկման՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

## ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԿ

### **Հարց**

***Առևտրի հարկ վճարողը կարո՞ղ է, արդյոք, իր կողմից մատակարարվող ապրանքների դիմաց գնորդի պահանջով դուրս գրել հարկային հաշիվներ:***

### **Պատասխան**

«Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի հարկ վճարողներն իրենց կողմից մատակարարվող ապրանքների դիմաց կարող են հարկային հաշիվ դուրս գրել, եթե դրանց համար «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով մատակարարների կողմից ներկայացված են հարկային հաշիվներ (ներմուծման դեպքում՝ ներմուծման հայտարարագրեր): Ընդ որում, առևտրի հարկ վճարողների կողմից դուրս գրվող հարկային հաշիվներում նշված ավելացված արժեքի հարկի գումարը չի կարող գերազանցել մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ ներմուծման հայտարարագրերում) առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը:

Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի (ամսվա) սկզբին տվյալ տեսակի ապրանքային մնացորդի բացակայության դեպքում կուտակված ավելացված արժեքի հարկի գումարները հանվում են հաշվառումից, և հարկ վճարողին իրավունք չի վերապահվում դրանց չափով դուրս գրել հարկային հաշիվներ՝ հետագա հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված նույն տեսակի ապրանքներ մատակարարելիս:

### **Հարց**

***Հաճախորդին նվիրաբերվող «Կուրակային» քարտում յուրաքանչյուր գնման դիմաց կուրակվող միավորները համարվո՞ւմ են, արդյոք, իրացված ապրանքի դիմաց կատարված զեղչեր և առևտրի հարկը ո՞ր գումարից պետք է հաշվարկվի:***

### **Պատասխան**

«Կուտակային» քարտում կուտակվող միավորները չեն դիտվում որպես հաճախորդին տրվող գեղչեր, այսինքն՝ վաճառվող ապրանքի գնի փոփոխություն տեղի չի ունենում, և հետևաբար առևտրի հարկը հաշվարկվում է վաճառված ապրանքի գնից:

### **Հարց**

***Առևտրի հարկ վճարողների կողմից եռամսյակի ընթացքում ԼՂՀ ներմուծված այնպիսի ապրանքների ներմուծման ծավալը, որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման և որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից, 1.0 մլն դրամը գերազանցելու դեպքում, ի՞նչ ժամկետով և պայմաններով է առևտրի հարկ վճարողը դադարում համարվել այդպիսին:***

### **Պատասխան**

«Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ եռամսյակի ընթացքում առևտրի հարկ վճարողի կողմից ԼՂՀ ներմուծված այնպիսի ապրանքների ներմուծման ծավալը, որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման և որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից, 1.0 մլն դրամը գերազանցելու դեպքում, դադարում է համարվել այդպիսին՝ նշված փաստը տեղի ունենալու պահից: Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ չի կարող համարվել առևտրի հարկ վճարող:

Նշվածը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ առևտրի հարկ վճարողը միաժամանակ իրականացնում է հարկման ընդհանուր համակարգով հարկվող գործունեություն և նրա կողմից ներմուծվում են առևտրական գործունեության հետ կապ չունեցող ապրանքներ՝ հիմնական միջոցներ, հումք և նյութեր:

**Հարց**

***Առևտրի հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանին վերաբերող` հարկ վճարողի կատարած ծախսերը հարկման ընդհանուր կարգին անցնելուց հետո ենթակա՞ են, արդյոք, նվազեցման:***

**Պատասխան**

«Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է համապատասխանաբար ելնելով իր կողմից եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից (հաշվեգրման եղանակ)՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հետևաբար առևտրի հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելիս ստացվող եկամուտներից չեն նվազեցվում առևտրի հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանին վերաբերող ծախսերը:

**Հարց**

***Առևտրի հարկ վճարողների կողմից «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի պահանջների խախտումով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները ի՞նչ ժամկետներում են պարտավոր վճարել բյուջե:***

**Պատասխան**

Առևտրի հարկ վճարողները «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտումով ավելացված արժեքի հարկի դրույքաչափի և գումարի վերաբերյալ նշում կատարելու դեպքում պարտավոր են առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը վճարել պետական բյուջե առևտրի հարկի վճարման ժամկետում (մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը): Ընդ որում, բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարները արտացոլվում են առևտրի հարկի հաշվարկում:

**Հարց**

***Խանութի միջոցով առևտրական գործունեություն իրականացնող ոչ առևտրային կազմակերպությունը կարո՞ղ է, արդյոք, գործունեության այդ մասով համարվել առևտրի հարկ վճարող:***

**Պատասխան**

Ոչ, քանի որ «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի հարկ վճարող կարող են համարվել միայն առևտրական գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ օրենքի նույն հոդվածով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում:

## ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ

### **Հարց**

***Հյուրանոցի հաճախորդներին տրվող սննդի արժեքը հյուրանոցային սպասարկման վճարի (գիշերավարձի) մեջ ներառվելու դեպքում ընկերությունը հանրային սննդի գործունեության կազմակերպման մասով կհաշվարկի՞, արդյոք, հասարակագրված վճար:***

### **Պատասխան**

Հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հաճախորդներին տրվող սննդի արժեքը հյուրանոցային սպասարկման վճարի (գիշերավարձի) մեջ ներառված լինելու դեպքում, այսինքն, երբ գիշերավարձի գումարի մեծությունը կախված չէ հաճախորդի կողմից նշված ծառայությունից օգտվելու փաստից, հարկերը հաշվարկվում են հարկման ընդհանուր համակարգով. այլ կերպ, նշված պայմանով հանրային սննդի գործունեություն իրականացնելիս ընկերության վրա չեն տարածվի «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ գլխի դրույթները:

### **Հարց**

***Ինչպե՞ս է որոշվում որևէ ամսվա հասարակագրված վճարի չափը ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեությունը ամսվա ընթացքում (օրինակ՝ տվյալ ամսվա 15-ից) սկսելու դեպքում:***

### **Պատասխան**

Քանի որ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության համար հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկելիս ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերը և դրանց թիվը ելակետային տվյալ չեն համարվում, ապա, անկախ գործունեության սկսման օրվանից, հաստատագրված վճարը հաշվարկվում է լրիվ ամսվա համար:

**Հարց**

***Բացառապես հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունն իրականացնելու դեպքում ներկայացվում են, արդյոք, շահութահարկի և ավելացված արժեքի հարկի հաշվարկներ:***

**Պատասխան**

Բացառապես հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունն իրականացնելու և այլ տեսակի հարկվող օբյեկտներ չունենալու դեպքում շահութահարկի և ավելացված արժեքի հարկի հաշվարկներ չեն ներկայացվում:

**Հարց**

***Հաստատագրված վճարներով հարկվող գործունեության n<sup>օր</sup> փեսակների համար են ներկայացվում սահմանային չափերի վերաբերյալ հայտարարություններ:***

**Պատասխան**

Սահմանային չափերի համապատասխան ցուցանիշների մասին հայտարարություններ ներկայացվում են խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով և առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեության, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության, ավտոտեխսպասարկման կայանների գործունեության համար:

**Հարց**

***Հաստատագրված վճարներով հարկվող գործունեության այն փեսակների համար, որոնց մասով աշխատած օրերը ելակերպային փվյալ չեն համարվում, հարկ վճարողի կողմից հարկային մարմին գործունեության դադարեցման մասին դիմում-հայտարարություն ներկայացվելու դեպքում կասեցվում է, արդյոք, հաստատագրված վճարի հաշվարկը ամսվա մնացած օրերի համար:***

**Պատասխան**

«Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքի 98-րդ հոդվածի համաձայն՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեու-

թյան այն տեսակների համար, որոնց մասով աշխատած օրերը ելակետային տվյալ չեն համարվում, գործունեության դադարեցման (կասեցման) մասին դիմում-հայտարարություն ներկայացնելու դեպքում՝ հաստատագրված վճարի հաշվարկը կասեցվում է հայտարարության մեջ նշված օրվանից, որը չի կարող հայտարարության ներկայացման հաջորդ օրվանից ավելի շուտ լինել: Հայտարարությունը ներկայացնելուց հետո տվյալ ամսում գործունեությունը վերսկսելու դեպքում հաստատագրված վճարը կհաշվարկվի ամբողջ ամսվա համար:

### **Հարց**

***Հանրային սննդի ոլորտում առանց սպասարկման սրահի գործունեություն իրականացնողը ինչպե՞ս է հաշվարկում հասարակագրված վճարը:***

### **Պատասխան**

Արտաքին բուֆետների և սպասարկման սրահ չունեցող այլ վայրերի համար սպասարկման մակերեսը, համաձայն «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի, ընդունվում է 20 քառ. մետր: Ընդ որում, հաստատագրված վճարները հաշվարկելիս հանրային սննդի գործունեության իրականացման վայրի (օբյեկտի) զբաղեցրած սպասարկման սրահի (սրահների) մակերեսի (50 քառ. մետրը չգերազանցելու) հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակիցը չի կիրառվում:

Արտաքին բուֆետների և սպասարկման սրահ չունեցող այլ վայրերի միջոցով հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար, անկախ վերջիններիս բացօթյա լինելու կամ չլինելու հանգամանքից, բացօթյա վայրերի համար նախատեսված ուղղիչ գործակիցներ չեն կիրառվում:

Հանրային սննդի մեկ վայրում (օբյեկտում) արտաքին բուֆետի և սպասարկման սրահ չունեցող այլ վայրի միջոցով իրականացվող հանրային սննդի սպասարկման տարբեր ձևերի առկայության դեպքում (մասնավորապես, շարժական պաղպաղակային սարքեր, «Գրիլ» սարքեր), հաստատագրված վճարի հաշվարկումը կատարվում է յուրաքանչյուրի համար առանձին, իսկ հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացվում է ելակետային տվյալի և ուղղիչ

գործակիցների վերաբերյալ մեկ (միասնական) հայտարարություն (կատարվում է համապատասխան նշում ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության «Սպասարկման մակերես» տողի վերջին սյունակում):

**Հարց**

***Հարկման ինչպիսի՞ համակարգ է գործում հանրակրթական դպրոցների շենքերում տեղակայված հանրային սննդի գործունեության իրականացման համար:***

**Պատասխան**

2016թ. հունվարի 1-ից հանրակրթական դպրոցների, պրոֆտեխնիկական ուսումնարանների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքերում կազմակերպվող հանրային սննդի գործունեության համար գործում է հաստատագրված վճարներով հարկման ռեժիմ:

## ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ

### Հարց

***Ֆիզիկական անչը կարո՞ղ է համարվել արտոնագրային վճար վճարող, եթե նրա նախորդ տարվա իրացման շրջանառության ընդհանուր գումարը կազմել է 10.0 մլն դրամ:***

### Պատասխան

Ոչ, քանի որ «Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտոնագրային վճար վճարող կարող են համարվել այն ֆիզիկական անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ՝ որպես վարձու աշխատող կատարած աշխատանքների), ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ավելացված արժեքի հարկի) չի գերազանցել 7.2 մլն դրամը:

### Հարց

***Թեթև մարդասարս ավտոմեքենայով ուղևորափոխադրումներ իրականացնող անհատ ձեռնարկատերը կարո՞ղ է համարվել արտոնագրային վճար վճարող, եթե նա օգտագործում է նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անչանց աշխատանքը:***

### Պատասխան

Ոչ, քանի որ «Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արտոնագրային վճար վճարողներ չեն կարող համարվել այն ֆիզիկական անձինք, որոնք իրենց գործունեության իրականացման համար օգտագործում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը:

**Հարց**

***Արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը հարկային մարմին է՞րբ են ներկայացնում արտոնագրային վճար վճարող համարվելու համար հայտարարությունը:***

**Պատասխան**

Արտոնագրային վճար վճարող համարվելու պայմանները բավարարող ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում (եռամսյակ, կիսամսյակ, ինն ամիս, տարի) արտոնագրային վճար վճարող համարվելու համար իրենց հաշվառման (բնակության, գործունեության իրականացման) հարկային մարմին են ներկայացնում դիմում-հայտարարություն՝ մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը:

**Հարց**

***Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարողների կողմից կազմակերպություններին ծառայություններ մատուցելու դեպքում, վերջիններիս կողմից պահվում է, արդյոք, եկամտային հարկ:***

**Պատասխան**

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարողների կողմից կազմակերպություններին, արտոնագրային վճար վճարող չհանդիսացող անհատ ձեռնարկատերերին ծառայություններ մատուցելու դեպքում վերջիններս, որպես հարկային գործակալ, եկամտի վճարման աղբյուրի մոտ եկամտային հարկը պահում (գանձում) են «Եկամտային հարկի մասին» Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

**Հարց**

***Արտոնագրային վճար վճարողները կրու՞մ են, արդյոք, հարկային մարմին հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման պարտավորություն:***

**Պատասխան**

Արտոնագրային վճար վճարողները հարկային մարմին օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններ (հաշվարկներ, հայտարարագրեր, տեղեկություններ) չեն ներկայացնում:

**Հարց**

***Ի՞նչ պայասխանավորություն է սահմանված արտոնագրային վճար վճարողների կողմից արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային մարմին ներկայացված դիմում-հայտարարությունում ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու համար:***

**Պատասխան**

Արտոնագրային վճար վճարողի կողմից հարկային մարմին արտոնագրային վճար վճարող համարվելու համար ներկայացված դիմում-հայտարարությունում ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարվում է տուգանք՝ 50 հազար դրամի չափով:

## ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

### **Հարց**

***Ի՞նչ ժամկետներ են սահմանված ստուգում իրականացնելու համար:***

### **Պատասխան**

Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր յուրաքանչյուր տարվա համար: Անհրաժեշտության դեպքում, ստուգում իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ, հարկային մարմնի ղեկավարի հրամանով կամ հանձնարարագրով այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 500.0 մլն դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած և (կամ) 50.0 մլն դրամ և ավելի հարկի գումար վճարած տնտեսավարող սուբյեկտի մոտ՝ 20 անընդմեջ աշխատանքային օրով, որի մասին պետք է տեղեկացվի տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը, իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով 500.0 մլն դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած և (կամ) 50.0 մլն դրամ և ավելի հարկի գումար վճարած տնտեսավարող սուբյեկտների համար՝ 45 անընդմեջ աշխատանքային օրը (չհաշված կասեցման ժամկետը):

### **Հարց**

***Ինչպիսի՞ իրավունքներ և պարտականություններ ունի տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը ստուգման արդյունքների հետ չհամաձայնվելու պարագայում:***

### **Պատասխան**

Ստուգման ակտի կապակցությամբ տարաձայնությունների դեպքում կողմերի կարծիքները արձանագրվում են ակտում: Տնտեսավարող սուբյեկտի կողմից ակտն ստորագրելու և տարաձայնությունները

ներկայացնելու ժամկետը չի կարող գերազանցել 3 աշխատանքային օրը: Ակտն ստորագրելուց հրաժարվելու դեպքում դրա մասին ակտում պետք է կատարվի համապատասխան գրառում: Հարկային մարմնի պաշտոնատար անձանց (ստուգողների) կազմած ստուգման ակտի փաստերի հետ չհամաձայնվելու դեպքում ակտը չստորագրելու պատճառների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացվում է գրավոր բացատրություն, ինչը հետագայում դառնում է ակտի անբաժանելի մասը: Ստուգումն իրականացնող անձանց գործողություններն օրենքով սահմանված ժամկետում կարող են բողոքարկվել հարկային մարմին կամ դատարան:

#### **Հարց**

***Ե՞րբ և ի՞նչ կարգով է հարկային մարմնի կողմից ստուգման ընթացքում կիրառվում կապարակնքման մեխանիզմը:***

#### **Պատասխան**

Ստուգումների ընթացքում ստուգվող տնտեսավարող սուբյեկտի պահեստների, շինությունների, դրամարկղերի, էներգիայի աղբյուրների, սարքավորումների կապարակնքումը կատարվում է բացառապես հարկային մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող գույքագրման և չափագրման դեպքերում. այս դեպքում չպետք է խոչընդոտվի տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքը: Այդ նպատակով, ելնելով ստուգվող օբյեկտի բնականոն գործունեության պահանջներից, ստուգվող օբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) կապարակնքում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձին (անձանց) կամ նրա (նրանց) անմիջական ղեկավարին պետք է ներկայացնի ժամանակացույց՝ նշելով իր աշխատանքային օրվա սկիզբը և ավարտը, ինչպես նաև այդ ժամերից դուրս կապարակնքված տարածքներ մուտք գործելու ժամանակահատվածը՝ անհրաժեշտ հիմնավորումներով: Ժամանակացույցում նշված՝ աշխատանքային օրվա կամ կապարակնքված տարածքներ մուտք գործելու ժամանակահատվածի սկզբից կապարակնքում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) կողմից կապարակնքները չբացելու դեպքում այդ ժամկետը լրանալուց մեկ ժամ հետո՝ ստուգվող

սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող անձը) կարող է բացել կապարակնիքները՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Կապարակնքումն իրականացվում է ստուգվող սուբյեկտի ղեկավարի կամ այլ պաշտոնատար անձի ներկայությամբ: Ստուգվող սուբյեկտի ղեկավարի կամ այլ պաշտոնատար անձի՝ կապարակնքմանը ներկա լինելուց հրաժարվելու դեպքում, ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմվում է կապարակնքմանը ներկա լինելուց հրաժարվելու մասին արձանագրություն, և կապարակնքումն իրականացվում է առանց ստուգվող սուբյեկտի ղեկավարի կամ այլ պաշտոնատար անձի ներկայության: Արձանագրվում է նաև կապարակնքման ավարտման պահը: Կապարակնիքների խախտումը առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

### **Հարց**

***Սահմանափակվո՞ւմ է, արդյոք, հարկային մարմնի կողմից միևնույն փնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ տարվա ընթացքում մեկից ավելի սպուզումների անցկացումը:***

### **Պատասխան**

Միևնույն տնտեսավարող սուբյեկտի մոտ հարկային մարմնի կողմից մեկ տարվա ընթացքում ստուգում կարող է իրականացվել ոչ ավելի, քան մեկ անգամ, բացառությամբ ակցիզային դրոշմանիշների, դրոշմապիտակների և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության, հաստատագրված վճարների ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների ճշտության, արտադրանքի, ապրանքների պակասորդի, հարկ վճարողի կողմից հայտարարության փակցման և դրանում պահանջվող տեղեկությունների ներառման ճշտության, տարադրամի փոխանակման կետերի կամ արժութային դիլերների-բրոքերների, առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների գրանցման ճշտության, առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի գործունեության իրականացման, արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի կիրառման, տարադրամի փոխանակման կետերի կամ արժութային դիլերների-բրոքերների կողմից:

մից արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների գրանցման, հարկային մարմնի կողմից անօրինական աշխատանքի բացահայտմանն ուղղված ստուգումների և հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարները հարկ վճարողի դիմումի հիման վրա հարկ վճարողի այլ հարկային պարտավորություններին հաշվանցելուց և (կամ) վերադարձնելուց առաջ կատարվող ստուգումների:

**Հարց**

***Ի՞նչ է հսկիչ գնումը:***

**Պատասխան**

Հսկիչ գնում է համարվում հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրությունը: Ընդ որում, տարբեր հարկատեսակների գծով հարկային պարտավորությունների վերահաշվարկը կատարելու նպատակով ֆինանսական տարվա մեջ յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար անհրաժեշտ է կատարել առնվազն մեկ հսկիչ գնում:

**Հարց**

***Որո՞նք են հսկիչ գնում իրականացնելու հիմքերը:***

**Պատասխան**

Հսկիչ գնում իրականացնելու համար հիմք են հանդիսանում՝  
1) տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկվող օբյեկտի գծով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված հաշվապահական հաշվառման, այլ հաշվառման կամ գրանցման սահմանված փաստաթղթերը չվարելը

կամ դրանք կոպիտ խախտումներով վարելը կամ հարկային մարմիններ կայացված հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելը, որի հետևանքով անհնար է դառնում տնտեսավարող սուբյեկտի հարկային պարտավորությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկելը.

2) սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունները.

3) հարկային մարմնի պաշտոնատար անձի հիմնավորված միջնորդությունը՝ հսկիչ գնում կատարելու թույլտվություն ստանալու համար, որտեղ պետք է նշվեն հսկիչ գնում կատարելու պատճառները, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրա արդյունքում, տնտեսավարող սուբյեկտի տվյալները, հսկիչ գնման իրականացման վայրը, ինչպես նաև հսկիչ գնումների իրականացման ժամանակահատվածի հիմնավորումը:

## ԳՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Հարց

**Անհատ ձեռնարկատերերի վրա տարածվում են, արդյոք, «Գրամարկդային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի պահանջները:**

### Պատասխան

«Գրամարկդային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է այն անհատ ձեռնարկատերերի վրա՝

1) որոնք օրացուցային տարվա որևէ պահին «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն են ներմուծել ապրանքներ, կամ՝

2) որոնք իրականացնում են լիցենզավորման ենթակա գործունեություն կամ ունեն լիցենզիա, որի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 50.0 հազար դրամ կամ ավելի, կամ՝

3) որոնց օրացուցային տարվա որևէ պահին ապրանքների մատակարարումից, ծառայությունների մատուցումից (բացառությամբ գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման և տոկոսների ստացման) հաշվարկված եկամուտների գումարը գերազանցում է 36 միլիոն դրամը:

Նշված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու դեպքում, օրենքի գործողությունը սկսվում է տարածվել այդ ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը:

### Հարց

**Գրամարկդային սահմանափակումները տարածվում են ֆիզիկական անչանցից վարչակալված տարածքի դիմաց վճարվող վարչավճարների վրա:**

### Պատասխան

«Գրամարկդային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված սահմանափակումները չեն տարածվում ֆիզիկական անձանց կատարվող՝

նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող վճարումների վրա:

**Հարց**

***Այն կազմակերպություններում, որտեղ ներդրված են հսկիչ-դրամարկղային մեքենաներ, ստացված կանխիկ դրամը ի՞նչ ժամկետներում է ենթակա մուտքագրման կազմակերպության դրամարկղ կամ բանկային հաշիվ:***

**Պատասխան**

Կազմակերպություններում, որտեղ ներդրված են հսկիչ-դրամարկղային մեքենաներ, դրանց միջոցով գրանցված տվյալների հիման վրա ստացված կանխիկ դրամը մուտքի օրդերով, ըստ յուրաքանչյուր օրվա տվյալների, մուտքագրվում է կազմակերպության դրամարկղ կամ կազմակերպության բանկային հաշիվ՝ կանխիկ դրամի ստացման օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**Հարց**

***Կազմակերպությունների կողմից առհաշիվ փրված կանխիկ գումարների նկատմամբ ինչպիսի՞ ժամկետային սահմանափակումներ են գործում:***

**Պատասխան**

ԼՂՀ կառավարության 29.11.2004թ. թիվ 477 որոշման համաձայն՝ գործուղումից տարբեր նպատակներով առհաշիվ տրված կանխիկ դրամը հաշվետու անձի կողմից լրիվությամբ չծախսվելու դեպքում պետք է վերադարձվի կազմակերպության դրամարկղ կամ բանկային հաշիվ՝ կանխիկ դրամը հաշվետու անձին տրամադրվելուց հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում: Գործուղման նպատակով տրված կանխիկ դրամի՝ ըստ նպատակի չծախսված մասը պետք է վերադարձվի կազմակերպության դրամարկղ կամ բանկային հաշիվ գործուղման ավարտից հետո ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում: Վերոնշյալ ժամկետների լրանալու պահին աշխատողի ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու դեպքում՝ նշված գումարները վերադարձվում են աշխատանքի վերադառնալուց հետո 3

օրվա ընթացքում: Ընդ որում, առհաշիվ տրված կանխիկ գումարների նկատմամբ ժամկետային սահմանափակումները չեն տարածվում այն կազմակերպությունների վրա, որոնց աշխատողների թիվը չի գերազանցում երկուսը:

**Հարց**

***Ինչպիսի՞ն է դրամարկղային մուտքի և ելքի օրդերների համարակալման կարգը:***

**Պատասխան**

Դրամարկղային մուտքի և ելքի օրդերները լրացվում են ձեռագիր (գրիչով) կամ տպագիր: Մուտքի և ելքի օրդերները համարակալվում են առանձին, այսինքն՝ մուտքի օրդերները համարակալվում են առանձին հերթականությամբ, իսկ ելքի օրդերները՝ առանձին: Համարակալումները վերսկսվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

**Հարց**

***Դրամարկղային մուտքի օրդերի վրա պարտադիր է, արդյոք, կազմակերպության կնիքի առկայությունը:***

**Պատասխան**

Համաձայն ԼԳՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 29-ի «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 477 որոշման՝ դրամարկղային մուտքի օրդերը կարող է կնքվել կամ գանձապահի դրոշմակնիքով կամ կազմակերպության կնիքով:

**Հարց**

***«Դրամարկղային գործառնությունների մասին» ԼԳՀ օրենքով սահմանված սահմանափակումները գործո՞ւմ են, արդյոք, չեոք բերված սպրանքների (ծառայությունների) դիմաց գնորդի կողմից կանխիկ դրամը բանկում մարակարարի բանկային հաշիվ մուտքագրելու միջոցով իրականացվող վճարման դեպքում:***

### **Պատասխան**

Գնորդի կողմից ձեռք բերված ապրանքների (ծառայությունների) դիմաց կանխիկ դրամը բանկում մատակարարի բանկային հաշիվ մուտքագրելու միջոցով կատարված վճարումը չի համարվում կանխիկ դրամով վճարում և, հետևաբար, «Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված սահմանափակումները չեն կիրառվում:

### **Հարց**

***«Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով փուզանքը ո՞ր դեպքում է կիրառվում:***

### **Պատասխան**

«Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով նախատեսված տուգանքը կիրառվում է դրամարկղային գրքի վարման կանոնները խախտելու դեպքում: Մասնավորապես, դրամարկղային գրքի վարման կանոնները հետևյալն են.

- տնտեսավարող սուբյեկտները վարում են հարկային մարմնի կողմից կնքված դրամարկղային գրքեր.

- գանձապահը դրամարկղային գրքում գրանցումները կատարում է գրչով, պատճենահան թղթի օգնությամբ՝ 2 օրինակից.

- դրամարկղային գրքում գրանցումը կատարվում է յուրաքանչյուր մուտքի կամ ելքի օրդերի հիման վրա՝ ոչ ուշ, քան կանխիկ դրամի ստացման կամ վճարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, տեղեկագրով կանխիկ դրամ վճարելիս դրամարկղային գրքում գրանցումը կատարվում է տեղեկագրով նախատեսված բոլոր վճարումներն ավարտելու կամ տեղեկագրի վրա նշված վճարման ժամկետը լրանալու օրը (եթե ժամկետը չի լրացել՝ ամսվա վերջին օրը)՝ կազմված դրամարկղային ելքի օրդերի հիման վրա: Դրամարկղային գրքի յուրաքանչյուր թերթի (գրանցումների) եզրափակումը կատարվում է ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ ամսվա վերջին օրվա դրությամբ, ոչ ուշ, քան ամսվա վերջին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Գանձապահը

Եզրափակելիս հաշվում և գրանցում է բոլոր մուտքագրված և ելքագրված գումարների հանրագումարները, ինչպես նաև եզրափակման օրվա վերջի դրությամբ դրամարկղում առկա կանխիկ դրամի մնացորդը: Գանձապահը դրամարկղային գրքի եզրափակված թերթի կտրվող մասը՝ մուտքի և ելքի օրդերների և դրանց կից փաստաթղթերի հետ միասին, որպես գանձապահի հաշվետվություն, հանձնում է հաշվապահություն, որի դիմաց ընդունող հաշվապահը ստորագրում է դրամարկղային գրքում:

#### **Հարց**

***Բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների նպատակային կանխիկ դրամական վճարների նկատմամբ կիրառվում են, արդյոք, «Գրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի սահմանափակումները:***

#### **Պատասխան**

«Գրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները տարածվում են ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գնման և վճարումների ընդունման /միանվագ և ամսական/ վրա: Բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կանխիկ դրամային վճարումները չեն դասվում դրանց շարքին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այդ վճարումները կարելի է դիտարկել որպես նպատակային համանման վճարումներ:

## ՀՍԿԻՉ-ԳՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

### Հարց

***Ո՞ր կազմակերպությունների վրա չի տարածվում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի գործողությունը:***

### Պատասխան

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքը չի տարածվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող բանկերի (այդ թվում՝ դուստր բանկերի), դրանց մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների (կետերի), օտարերկրյա բանկերի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց՝ միայն այդ գործունեության մասով, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց (այդ գործունեության մասով), գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների վրա:

### Հարց

***Խանութում ապրանքների մանրածախ վաճառք իրականացնելիս կանխավճար սպանալու դեպքում պրամատորվում է, արդյո՞ք, հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն:***

### Պատասխան

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխավճարի ստացման դեպքում հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոնի տրամադրումը պարտադիր է:

**Հարց**

***Մանրածախ վաճառքի կամ բնակչությանը ծառայությունների մատուցման ժամանակ վճարումը բանկային քարտերի միջոցով կատարվելու դեպքում, գնորդին կամ ծառայություն ստացողին կտրոնի տրամադրումը պարտադիր է, արդյո՞ք:***

**Պատասխան**

Քանի որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում, ուստի մանրածախ վաճառքի կամ ծառայությունների մատուցման ժամանակ բանկային քարտերի միջոցով վճարումներ կատարելիս գնորդին (ծառայություն ստացողին) հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն չի տրվում:

**Հարց**

***Կոմիսիոն հիմունքներով լիցքավորման քարտերի մանրածախ վաճառքի դեպքում պարտադիր՞ ը է, արդյոք, ՀԳՄ-ների կիրառումը:***

**Պատասխան**

Լիցքավորման քարտերի կոմիսիոն հիմունքներով մանրածախ վաճառքի դեպքում գնորդներից կանխիկ վճարումներ ընդունելիս ՀԳՄ-ների կիրառումը պարտադիր է:

**Հարց**

***Տուգանքի ի՞նչ չափ է սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության համար:***

**Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼԳՀ օրենքով սահմանված դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով դրամական գործարքներ իրականացնելու վայրում հարկային մարմնում գրանցված հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում

է հարյուր հիսուն հազար դրամի չափով:

#### **Հարց**

***Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումներ թույլ տված տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ ի՞նչ ընթացակարգով են կիրառվում լրացուցիչ տուգանքներ:***

#### **Պատասխան**

Մեկ տարվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների երկրորդ և ավելի անգամ խախտումներ արձանագրելու դեպքում տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռվում գործունեության կասեցման փոխարեն վճարել լրացուցիչ տուգանքներ, բացառությամբ եթե մեկ տարվա ընթացքում չորրորդ և ավելի անգամ է սուբյեկտը թույլ տվել հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում, որոնց գործունեությունը պարտադիր կասեցվում է օրենքով սահմանված ժամկետով:

Լրացուցիչ տուգանքի նշանակման համար խախտում թույլ տված սուբյեկտի կողմից խախտումն արձանագրելու օրվանից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմին պետք է ներկայացվի լրացուցիչ տուգանքի վճարման վերաբերյալ գրավոր հայտարարություն, որի հիման վրա էլ հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ նշանակվում է տուգանք:

Լրացուցիչ տուգանքի նշանակման մասին որոշման մեկ օրինակը այն ընդունելու օրվան հաջորդող աշխատանքային օրը տրամադրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Տուգանքի նշանակման օրվանից երկամսյա ժամկետում սուբյեկտի կողմից տուգանքը չնուժեցնելու դեպքում այն կրկնապատկվում է:

## ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

### **Հարց**

***Ինչպե՞ս է հաշվարկվում պետական փուրքը լիազոր մարմնի կողմից լիցենզավորման ենթակա գործունեությունը ոչ լրիվ փարով երկարաձգելու դեպքում:***

### **Պատասխան**

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզիայի գործողության ժամկետը, օրենսդրությամբ սահմանված կարգով, ոչ լրիվ տարով երկարաձգվելու դեպքում պետական տուրք գանձող մարմնի կողմից «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված տարեկան պետական տուրքը ենթակա է համամասնորեն հաշվարկման և գանձման՝ հաշվի առնելով լիցենզիայի գործողության երկարաձգված ժամկետի ոչ լրիվ տարվա ամիսների թիվը և տարեկան պետական տուրքի չափը, ընդ որում, լիցենզիայի գործողության ժամկետը ոչ լրիվ տարով օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է երկարաձգվել միայն ամիսներով:

### **Հարց**

***Լիցենզիայի գործողության կասեցման դեպքում գանձվում է, արդյո՞ք, հերթական փարեկան պետական փուրք:***

### **Պատասխան**

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 6<sup>1</sup>-ին հոդվածի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցվելու դեպքում (բացառությամբ կասեցված լինելու ժամանակահատվածում դիմումի համաձայն ԼՂՀ օրենսդրությամբ լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչման դեպքերի) հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են վճարման՝ անկախ լիցենզիայի գործողության կասեցման հիմքերից ու ժամկետներից:

**Հարց**

***Ինչպիսի՞ ժամկետ է սահմանվում լիցենզիայի գործողության ժամկետի առաջին տարվան հաջորդող յուրաքանչյուր հաջորդ տարվա համար տարեկան պետական տուրքի վճարման համար:***

**Պատասխան**

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիցենզիայի վրա նշված լիցենզիայի տրման ամսաթվից ոչ ուշ:

**Հարց**

***Հերթական տարեկան պետական տուրքերի վճարման համար օրենքով սահմանված ժամկետներում պետական տուրքը չվճարելու դեպքում տույժերի հաշվարկը ո՞ր դեպքերում կարող է դադարեցվել:***

**Պատասխան**

Հերթական տարեկան պետական տուրքերի վճարման համար օրենքով սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու համար տույժերի հաշվարկը դադարեցվում է.

- լիցենզիաների, արտոնագրերի և թույլտվությունների համար ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված գործողության ժամկետներից շուտ դրանց գործողության դադարեցման դեպքում դադարեցման օրվանից,

- լիցենզավորված անձի դիմումի հիման վրա լիցենզիայի դադարեցման դեպքում դիմումի ներկայացման (դիմումում դադարեցման ավելի ուշ ժամկետ նշված լինելու դեպքում՝ այդ օրվանից, իսկ դիմումում ավելի վաղ ժամկետ, քան դիմումի ներկայացման օրը նշված լինելու դեպքում՝ դիմումի ներկայացման օրվանից) օրվանից (եթե այդ դիմումը հետագայում բավարարվել է),

- լիցենզավորման ենթակա գործունեությունն այլևս այդպիսին չհամարվելու մասին համապատասխան օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից,

- 365-րդ օրը լրանալուց հետո:

**Հարց**  
***Ինչպիսի՞ կարգով են վերադարձվում սահմանված չափից ավելի վճարված պետական տուրքի գումարները:***

**Պատասխան**

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված չափից ավելի վճարված պետական տուրքը վերադարձվում է ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից՝ վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, եթե՝

- այն ներկայացվել է ֆինանսական մարմիններ պետական տուրքի կամ նրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից 3 տարուց ոչ ուշ ժամկետում: Ընդ որում՝ դիմում տալը կասեցնում է նշված ժամկետի ընթացքը,

- կցված են պետական տուրք գանձող մարմինների տեղեկանքները՝ պետական տուրքը մասնակի կամ լրիվ վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին, ինչպես նաև պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը:

**ԱՎՏՈՄՈՔԵԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ,  
ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ  
ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ (ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ)**

**Հարց**

***Ինչպե՞ս է որոշվում սվտոմոքիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (սվտոճանապարհային մասհանումների) հաշվարկման օբյեկտը փոխանակման գործարքների դեպքում:***

**Պատասխան**

Փոխանակման գործարքներ իրականացնելու դեպքում մասհանումների հաշվարկման օբյեկտը որոշելու համար հիմք է հանդիսանում այդ ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պահին դրանց սովորաբար կիրառվող գինը: Այսինքն՝ մասհանումների հաշվարկման առումով փոխանակման գործարքը դիտվում է որպես երկու առանձին գործարքների իրականացում՝ մեկ ապրանքի կամ ծառայության վաճառք և մեկ այլ ապրանքի կամ ծառայության ձեռքբերում:

**Հարց**

***Սվտոճանապարհային մասհանումների ի՞նչ դրույքաչափ է կիրառվում արդյունահանված ավազակոպճային խառնուրդների իրացումից սրացված հասույթի նկատմամբ:***

**Պատասխան**

Համաձայն «Սվտոմոքիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ արդյունահանված ավազակոպճային խառնուրդների իրացումից ստացված հասույթի նկատմամբ մասհանումները հաշվարկվում են 0.5 տոկոս դրույքաչափով: Արդյունահանողները արդյունահանված ավազակոպճային խառնուրդները ներտնտեսական կարիքների համար օգտագործելու դեպքում մասհանումներ չեն կատարում:

**Հարց**

***Ինչպիսի՞ կարգ է սահմանված ավտոճանապարհային մասհանումների հաշվարկման համար:***

**Պատասխան**

Տնտեսավարող սուբյեկտները ավտոճանապարհային մասհանումները հաշվարկում են ինքնուրույն՝ մասհանումների տարբեր դրույքաչափերով հաշվարկվող գործունեության տեսակների մասով վարելով առանձնացված հաշվառում:

Մասհանումներ վճարողները յուրաքանչյուր եռամսյակ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում մասհանումների հաշվարկներ և նույն ժամկետում պետական բյուջե վճարում հաշվարկված մասհանումների գումարը:

Վճարողների կողմից մասհանումների գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով կարող են ներկայացվել ճշտված հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար մասհանումների պարտավորությունների վերահաշվարկ, եթե ճշտված հաշվարկները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ ստուգված ժամանակաշրջաններին:

**Հարց**

***Տուգանքի ի՞նչ չափ է նախատեսվում ստուգումներով մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ ավտոճանապարհային մասհանումը թաքցնելու համար, եթե արձանագրվում է մասհանումների տարբեր տեսակների թաքցնում:***

**Պատասխան**

Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մասհանումները թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում մասհանումները կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում գանձվում

Է տուգանք՝ մասհանման գումարի 40 տոկոսի չափով՝ անկախ մասհանումների տեսակներից:

**Հարց**

**ՊՈԱԿ-ները ազատվո՞ւմ են, արդյոք, ավտոճանապարհային մասհանումներից:**

**Պատասխան**

«Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ՊՈԱԿ-ները ավտոճանապարհային մասհանումներից ազատվում են անհատույց սպառման մասով. հատուցմամբ գործարքներ իրականացնելիս ավտոճանապարհային մասհանումները հաշվարկվում և վճարվում են ընդհանուր սահմանված կարգով:

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ

### **Հարց**

***Ի՞նչ արժեք է սահմանված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փարածքում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակների շեռքերման համար:***

### **Պատասխան**

Համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9.5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դրոշմապիտակի արժեքը որոշվում է տվյալ նմուշի դրոշմապիտակի արտադրության, պահպանության, օգտագործումից հանելու հետ կապված ծախսերից:

Ներկայումս ԼՂՀ կառավարության 28.12.2013թ. N 982-Ն որոշման համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակի հազար հատի արժեքը սահմանված է 3 528 ՀՀ դրամ:

### **Հարց**

***Մուրճի հիմքով ընպելիքները, համաբուրային հավելումներով թեյերը, արդյո՞ք, ենթակա են դրոշմապիտակներով դրոշմավորման:***

### **Պատասխան**

Մուրճի հիմքով ընպելիքները, դեղձի, կիտրոնի, ազնվամորու և համաբուրային այլ հավելումներով թեյերը, ինչպես նաև պատրաստի՝ սպառման ենթակա այլ ընպելիքները, որպես «այլ ոչ ակոհոլային խմիչքներ» դասվում են ԱՏԳ ԱԱ 2202 90 ենթադիրքին և ենթակա են պարտադիր դրոշմավորման:

### **Հարց**

***Պիպանիության ժամկետը լրացած դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների դուրսգրման դեպքում ինչպիսի՞ հարկային պարտավորություններ են առաջանում:***

### **Պատասխան**

«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի և ԼՂՀ կառավարության 28.12.2013թ. N 984-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան դուրս գրված՝ պիտանիության ժամկետը լրացած ապրանքների մասով հարկային պարտավորություններ չեն առաջանում: Միաժամանակ, պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դրոշմավորման համար դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարները ենթակա չեն նվազեցման հարկ վճարողի հարկային պարտավորություններից, դրանք շահութահարկով հարկման նպատակով օրենքով սահմանված կարգով նվազեցվում են համախառն եկամտից: Այդպիսի ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների համար վճարված գումարով նախկինում նվազեցված հարկային պարտավորությունների գումարի չափով արտադրողի մոտ այդ ապրանքների դուրսգրման օրվա դրությամբ առաջանում է դրոշմապիտակների գծով պարտավորություն:

### **Հարց**

***Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակները հարկային մարմինների կողմից հետ չընդունվելու դեպքում առաջանում են, արդյոք, հարկային պարտավորություններ:***

### **Պատասխան**

Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու, օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների խախտմամբ պայմանավորված հարկային մարմինների կողմից հետ չընդունվելու կամ դրոշմապիտակների կորստի դեպքերում համապատասխան փաստն արձանագրվելու օրվա դրությամբ հաշվարկվում են հարկային պարտավորություններ այն չափով, որ չափով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով կհաշվարկվեին դրանք, եթե դրոշմապիտակների տեսակին, քանակությանը և տարողությանը համապատասխանող ապրանքները հարկ վճարողի կողմից իրացված լինեին:

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ**

**Հարց**

***Շարունակվող անաշխատունակության քերթիկի (հիվանդություն) դեպքում առաջին աշխատանքային օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրերի համար գործատուն վարչու աշխատողի նպաստը, արդյո՞ք, կրկին վճարում է իր միջոցների հաշվին:***

**Պատասխան**

Ժամանակավոր անաշխատունակության նույն դեպքի (շարունակության) համար ժամանակավոր անաշխատունակության առաջին աշխատանքային օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրերի համար վարձու աշխատողի նպաստը վճարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Այսինքն, գործատուն իր միջոցների հաշվին նպաստը վճարում է մեկ անգամ՝ անկախ ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի համար ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված քերթիկների քանակից:

**Հարց**

***Մայրության նպաստի հաշվարկման ժամանակ միջին ամսական աշխատավարձի չափը 69 620 ՀՀ դրամից ցածր լինելու դեպքում, ինչպե՞ս է հաշվարկվում նպաստը:***

**Պատասխան**

Եթե «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մայրության նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը կամ եկամտը պակաս է 69 620 ՀՀ դրամից, ապա որպես միջին ամսական աշխատավարձ հիմք է ընդունվում 69 620 ՀՀ դրամը:

**Հարց**

***Վարչու աշխատողը ներկայացրել է 3 ամսից ավելի անաշխատունակության թերթիկ, գործարուն իրավունք ունի՞ վճարելու նպաստ ամբողջ ժամանակաշրջանի համար:***

**Պատասխան**

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարձու աշխատողին հիվանդության նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից մինչև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամության խմբի սահմանումը կամ հաշմանդամության խմբի վերանայումը: Տեղական հիվանդության դեպքում վարձու աշխատողները բժշկասոցիալական փորձաքննության են ուղեգրվում անաշխատունակությունը սկսելու օրից 3 ամսից ոչ ուշ: Եթե բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի որոշման համաձայն վարձու աշխատողը հաշմանդամ չի ճանաչվում, բայց շարունակում է դեռևս մնալ անաշխատունակ, ապա հիվանդության նպաստ ստանալու նրա իրավունքը կարող է շարունակվել, բայց ոչ ավելի, քան մինչև 3 ամիս ժամկետով կամ մինչև օրենքով սահմանված կարգով աշխատանքից ազատվելը:

**Հարց**

***Ինչպե՞ս է հաշվարկվում վարչու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը:***

**Պատասխան**

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից

(եկամտից): Միջին ամսական աշխատավարձը բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) և բազմապատկվում հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի (ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին մայրության նպաստ նշանակելու դեպքում՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի) օրացուցային օրերի թվով:

**Հարց**

***Ինչպե՞ս է հաշվարկվում վարչու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը:***

**Պատասխան**

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձի (եկամտի) ութսուն տոկոսից: Վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը բաժանվում է 25-ի (հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 21-ի) և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի երկրորդ աշխատանքային օրվանից սկսած աշխատանքային օրերի թվով:

**Հարց**

***Տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների վճարման համար չբավարարելու դեպքում ի՞նչ կարգով են վճարվում նպաստները:***

**Պատասխան**

Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված բոլոր վարձու աշխատողների եկամտային հարկի ընդհանուր գումարը բավարար չէ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների

վճարման համար, ապա գործատուն նպաստների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հաշվին վճարվող գումարների պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ գործատուի կողմից հարկային մարմին ներկայացված տեղեկանքի հիման վրա՝ հարկային մարմնի հաստատած տեղեկանքը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում:

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84  $\frac{1}{16}$ : Ծավալը՝ 5.5 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 400:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25